# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 06 (1706) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 21, 2015
VOLUME 35, NO. 06 (1706) SATURDAY, FEBRUARY 21, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Երեւան Ժամանեց ԱՄՆ Պետական Քարտուղարի Օգնականը



*ԱՄՆ Պետական Քարտուղարի Օգնական Վիքթորիա Նուլընտ*

*Տարածաշրջան կատարած այցի շրջագիծէն ներս, Փետրուար 18 Երեւան ժամանեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի օգնական՝ Վիքթորիա Նուլընտ: Ան հանդիպումներ ունեցաւ նախագահ Սերժ Սարգսեան եւ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ:*

*Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնեան նաեւ այցելեց Ցեղասպանութեան Թանգարան եւ յարգանքի տուրք մատուցեց Եղեռնի զոհերու յիշատակին:*

*Շար.ը էջ 4*

## Սերժ Սարգսեան-Գագիկ Ծառուկեան Հաշտութիւն

### ԲՀԿ-Ի Ղեկավարը Կրնայ Վերածուիլ Քաղաքական Դիակի

*Վերջին օրերու իրադարձութիւնները եւ դէպքերու արագ զարգացումը, անգամ մը եւս եկան հաստատելու թէ Հայաստան հեռու է օրինական պետութիւն նկատուելու գաղափարէն:*

*Արդարեւ, Փետրուար 12-ին ելոյթ ունենալով իշխող Հանրապետական կուսակցութեան ժողովի ընթացքին, նախագահ Սերժ Սարգսեան անակնկալ յարձակում գործեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար, երկրի թիւ մէկ օլիկարխ՝ Գագիկ Ծառուկեանի վրայ, որ վերջին ժամանակներուն սկսած էր անհնազանդութեան նշաններ ցոյց տալ իշխանութիւններուն, համագործակցելով Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Րաֆֆի Յովհաննիսեանի նման արմատական ընդդիմադիր գործիչներու հետ:*

*Իր ելոյթին մէջ Սարգսեան Ծառուկեանը որակեց «երկրի համար չարիք», «մտաւոր ցածր ունակութիւններով անհատ», «չմուծուած միլիարդաւոր դրամ հարկերու պատասխանատու», «բարեգործութեան անունով պահուած գումարներու հեղինակ» Եւայլն, օգտագործելով նոյնիսկ Ծառուկեանի փողոցային անունը:*

*Յաջորդ օրը հրապարակուեցաւ Ծառուկեանի պատասխանը,*



*ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան եւ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեան երբ մօտ գործակիցներ էին*

*որ դարձեալ լեցուն էր ծանր մեղադրանքներով՝ Սերժ Սարգսեանի հասցէին, միաժամանակ յայտարարելով նախագահի պաշտօնանկութեան սկիզբը ու հրաւիրելով Փետրուար 20-ին տեղի ունենալիք հանրահաւաքի:*

*Սարգսեանի ելոյթէն անմիջապէս ետք, պետական ամբողջ մեքենան անցաւ գործի, Ծառուկեանն ու անոր կուսակցութիւնը թեւաթափ ընելու նպատակով:*

*Նախագահական հրամանագիրով, Ծառուկեան պաշտօնանկ եղաւ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի անդամութենէն, խորհրդարանէն ներս սկսաւ Ծառուկեանը պատգամաւորական մանտատէն զրկելու գործընթացը, Ծառուկեանի եւ անոր գործերու պաշտպանութիւնը ստանձնող 200 ոստիկաններ արձակուեցան աշխատանքէ, ստուգումներ սկսան Ծառուկեանի պատկանող գործարաններէն ներս, ԲՀԿ կուսակցութեան անդամներ բերման ենթարկուեցան ոստիկանութեան կողմէ: Բացի այդ, Բարգաւաճ Հայաստանի անդամ հինգ պատգամաւորներ դուրս եկան կուսակցութեան խորհրդարանական խմբակցութենէն: Նոյնիսկ լուրեր սկսան տարածուիլ Ծառուկեանի հաւանական ձերբակալութեան մասին:*

*Այս բոլորէն ետք, Փետրուար 17-ին յայտնի դարձաւ որ, հանդիպում մը տեղի ունեցած է Սարգսեանի եւ Ծառուկեանի միջեւ, որու ընթացքին գոյացած է հաշտութիւն:*

*Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւնը անուղղակիօրէն եկաւ*

*Շար.ը էջ 4*

## ՍԴՀԿ Ողջունելով Սերժ Սարգսեանի Քայլը՝ Ձայն Կը Նկատէ Նաեւ Ուշացած

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանը, մեկնաբանելով Խորհրդարանէն Հայ-Թրքական արձանագրութիւններու ետկանչը յայտարարեց.*

*«Մենք, ի հարկէ, ողջունում ենք, որ նախագահ Սերժ Սարգսեանն այդ արձանագրութիւնները վերջապէս ետ կանչեց: ՍԴՀԿ-ն մշտապէս կողմ է արտայայտուել դրանց յետկանչմանն ուղիղ այնքան, որքան նաեւ դէմ է եղել ընդհանրապէս ստորագրելուն: Պաշտօնական Անգարան, ուրանալով Ցեղասպանութեան փաստը, օգնելով ու զինելով Ատրպէյճանին, միակողմանիօրէն փակելով Հայաստանի հետ սահմանը՝ իրեն ցուցադրում է իբրեւ ագրեսոր երկիր: Ի դէպ, հենց Թուրքիան է նաեւ առկախել այս գործընթացը: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ Խորհրդարանում այդ արձանագրութիւնների պահպանումը ոչ ոք չէր կարող հիմնաւորել: Հնչակեան կուսակցութիւնը նաեւ ակնկալում է, որ Հայաստանն ընդհանրապէս ետ կը կանչի իր ստորագրութիւնն այդ արձանագրութիւնների տակից»:*

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կ՛ողջունէ ՀՀ նախագահ Սերժ Սարգիսեանի 16/2/2015 թուի ,Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան Միջեւ Դիւանագիտական Յարաբերութիւններ Հաստատելու Մասին եւ ,Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան Միջեւ Յարաբերութիւնների Զարգացման Մասին արձանագրութիւններուն ՀՀ Ազգային Ժողովէն յետս կոչելու որոշումը:

Այս որոշումը ցանկութիւնն էր հնչակեան շարքին, որուն արտայայտութիւնը եղաւ 2013 Սեպտեմբերին ՍԴՀԿ 20-րդ Համագումարի համապատասխան որոշումը:

Այս որոշումով ՀՀ նախագահ Սերժ Սարգիսեան, Հայ-Թուրք յարաբերութիւններուն յետագայ զարգացումը կը դնէ ազգային առողջ հիմքերու վրայ:

**Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւն**

## Սերժ Սարգսեան Խորհրդարանէն Ետ Կանչեց Հայ-Թրքական Արձանագրութիւնները

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան նամակով դիմած է Խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակեանին՝ տեղեկացնելով որ որոշած է Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները ետ կանչել Ազգային Ժողովէն: Նամակին մէջ Սարգսեան ըսած է, որ անցնող վեց տարիներու ընթացքին՝ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրումէն ի վեր, Հայաստան միշտ հետեւողական դիրքորոշում ցուցաբերած է արձանագրութիւնները կեանքի կոչելու հարցով, սակայն Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ քաղաքական կամքի բացակայութիւնը, արձանագրութիւններու տառի ու ոգիի աղաւաղումները եւ նախապայմաններու շարունակաբար արծարծումը եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի նախօրեակին նոր թափ ստացած ժխտողականութեան եւ պատմութեան խմբագրման քաղաքականութիւնը մղած են զինք առնելու նման որոշում:*

*«Ուստի, ես որոշում եմ կայացրել 2009 թուականի Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման մասին» արձանագրութիւնները Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովից ետ կանչելու վերաբերեալ»:*

*Հայ-Թրքական յարաբերութիւններու բարելաւման գործընթացը սկսած էր 2008-ին՝ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ: 2009-ի Հոկտեմբեր 10-ին Հայաստանի եւ Թուրքիոյ ԱԳ նախարարներ Էդուարդ Նալբանտեան ու Ահմէտ Դաւութօղլու Ցիւրիխի մէջ «Դիւանագիտական յարաբերութիւններու մասին ար-*

*Շար.ը էջ 4*

# Հայկական բարեգործութեան սարսափելի երեսը

*ՄՈՒՍԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ*

*Սերժ Սարգսեանը ՀՀԿ խորհրդի վերջին նիստում իր ելոյթի վերջում՝ անելիքների վերաբերեալ հատուածում, ասաց.- Տարիներ ի վեր շարունակում են օդում կախուած մնալ չստուգուած լուրերը [Գագիկ Ծառուկեանի] չմուծուած միլիարդաւոր դրամ հարկերի, տարեցների կենսաթոշակներից ու երիտասարդների կրթուելու իրաւունքից գողացուած միլիարդները չնչին, այսպէս ասած, «բարեգործութեան» անուան տակ քօղարկելու մասին: Ես յորդորում եմ Հայաստանի Հանրապետութեան վարչապետին՝ յանձնարարել համապատասխան մարմիններին մինչեւ վերջ ու մանրամասն ստուգել այս լուրերի իսկութիւնը եւ բաց ներկայացնել բոլորին:*

*Արդէն բաւական երկար ժամանակ է՝ Հայաստանում ծաղկում է մի երեւոյթ, որին շատ դժուար է բնորոշում տալ մարդասիրութեան եւ բարոյականութեան տեսանկիւնից, թէեւ առաջին հայեացքից այդ երեւոյթը, իբր թէ, մարդասիրութիւն եւ բարոյականութիւն է: Օրինակների պակաս չկայ: Բոլորի յիշողութեան մէջ են դեռ թարմ կադրերը Աբովեանում նորակառոյց եկեղեցու բացման արարողութիւնից, երբ մարդկանց դրել էին բացուած սեղանների առաջ, եւ երբ այսպէս ասած ընտրեալները հեռացան սեղաններից, մարդիկ ուղղակի իրար էին յօշոտում մի կտոր անվճար ուտելիքի համար:*

*Նման վիճակի հասցուած հասարակութիւնները ուղղակիօրէն անպաշտպան են ցանկացած մանիպուլեացիաներից եւ միանգամայն հեշտ կառավարելի են մի կտոր անվճար լաւաշով, մի քանի մետր անվճար բացուած սեղանով: Սա՝ «Բաժանիր եւ տիրիր»՝ դարերով եկած փիլիսոփայութեան մէկ այլ տարբերակն է՝ բաժանիր մի քանի փշրանք, միայն թէ որքան կարող ես շատ գովազդելով այդ բարեգործութիւնը, որքան կարող ես՝ հրապարակային դարձնելով, եւ տիրի՛ր այդ հասարակութեանը:*

*Մալաթիա-Սեբաստիա համայնքում պատգամաւոր օլիգարխ Սամուէլ Ալեքսանեանը անվճար լաւաշ է բաժանում, անձնագրերով, միայն վարչական այդ շրջանի բնակիչներին: Եւ առաւօտից երեկոյ բնակիչները ուղղակի ժամերով հերթեր են կանգնում եւ հերթերում իսկական կռիւ անում միմեանց հետ այդ անվճար լաւաշների համար: Ամէն ինչ յիշեցնում է, այսպէս կոչուած, մութ ու ցուրտ տարիները, երբ հացի համար մարդիկ հերթերում իրար էին կոտորում: Սակայն եթէ այդ տարիներին պատերազմ ու շրջափակում էր, ապա այսօր լիովին այլ իրավիճակ է:*

*Այսօր, բարեբախտաբար, խաղաղութիւն է, այսօր Հայաստանում լրիւ այլ պայմաններ են, այլ մթնոլորտ, այլ միջավայր, եւ չնայած ահռելի խնդիրներին՝ Հայաստանում այսօր կան միլիարդատէրեր, որոնք հենց այս խաղաղութեան տարիներին են ձեւաւորուել եւ տեղաւորուել Հայաստանի իշխանութեան տարբեր օղակներում, տեղաւորուել քաղաքական դաշտի տարբեր բեւեռներում: Միլիարդատէրեր, որոնք ձեւաւորուել են երկրի եւ հասարակութեան աղքատացման ֆոնին: Միլիարդատէրեր, որոնք այսօր, ըստ էութեան, հասարակութեան աղքատացումն են դարձրել իրենց համար միջոց եւ գործիք նոյն այդ հասարակութեան վրայ իշխելու եւ վերջին փշրանքներն անգամ քամելու: Վկան հենց անվճար հացի ցուցադրական ակցիաներն են, որ կազմակերպել է օլիգարխ պատգամաւորը, եւ որը ոչ այլ ինչ է, քան հասարակութեան, մարդկանց արժանապատուութեան հրապարակային նուաստացում:*

*Արժանապատիւ կեանքի, ապագայի փոխարէն՝ արժանապատուութեան նուաստացում, ընդ որում՝ արժէքային դեգրադացիայի վերջին ստադիային բնորոշ միջոցներով՝ բարեգործութեան քօղի տակ:*

*Հայաստանում բարեգործութիւն երեւոյթն էլ արժեզրկուել է հենց այն խաւի ներկայացուցիչների կողմից, որոնց գերհարստացման արդիւնքում պետութիւնն ու հասարակութիւնը հասել են մի կտոր հացին կարօտ վիճակի: Եւ բարեգործութեան անուան տակ տեղի է ունենում հասարակութեան, մարդու արժանապատուութեան հրապարակային նուաստացում:*

*Առաջին՝ աղքատացման, ընչազրկման փուլը հետեւում է, այսօր բուռն ընթացքի մէջ է բաժանելու եւ տիրելու փուլը: Եւ սա այսօր հասարակական-քաղաքական կեանքի գերակայ տրենդն է, որովհետեւ այդ տրենդի վրայ են ե՛ւ իշխանական օդիոզ դէմքերը, ե՛ւ, այսպէս ասած, ընդդիմադիր առաջնորդները, որոնք սոցալական նոյն «էլիտար» դասի ներկայացուցիչներն են, որոնք միմեանց հետ հարսանիքներ, կնունքներ, ծնունդներ, դուբայական արձակուրդներ են անցկացնում եւ երեւի թէ կիսւում են «բարեգործական» նուաճումների փորձով:*

*Այս դասից աւելին ակնկալելն իհարկէ միամտութիւն կը լինէր, եթէ մեր աչքի առաջ է եղել նոյն այդ մարդկանց գործունէութիւնը Հայաստանի յետպատերազմեան շրջանում: Ամենասարսափելին այն է, որ այս դասը այսօր ըստ էութեան վայելում է այսպէս կոչուած քաղաքական շերտի աջակցութիւնը, եւ այդ շերտի ձեռամբ է նաեւ մի մասով հռչակուել Հայաստանի փրկիչ: Այսպէս կոչուած քաղաքական շերտը ապահովում է վերը բերուած մոդելաւորմամբ քաղաքականութեան կնիքը, այսպէս ասած «ԺԷԿ-ի տեղեկանքը»՝ ընդդիմադիր լինելու կամ առաջնորդ լինելու մասին: Եւ եթէ առաջին դասի դէպքում գործ ունենք հասարակութեան նիւթական ընչազրկման եւ հետեւանքների հետ, ապա երկրորդի դէպքում գործ ունենք հասարակութեան առաջ՝ ոչ նիւթական, սակայն խորքային առումով էլ աւելի վտանգաւոր մեղքի կամ յանցանքի՝ արժէքային, գաղափարական, սկզբունքների ընչազրկման հետ:*

*Նիւթական կորուստները կարող են վերականգնել հասարակութիւնները, որոնք արժէքային, գաղափարական առումով սնանկացուած, թալանուած չեն: Սակայն երբ նման տեղեկանքներով թալանւում են արժէքները, գաղափարներն ու սկզբունքները, կորուստները, ըստ էութեան, չափազանց դժուար է լինելու վերականգնելը:*

*«ԺԱՄԱՆԱԿ»*

# Քոչարեանը կրկին դուրս չեկաւ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Ռոբերտ Քոչարեանը ստեղծուած քաղաքական իրավիճակի արձագանքի հարցում երկար սպասեցնել չտուեց: Իսկ նրա արձագանքի սպասումն անկասկած մեծ էր, քանի որ Սերժ Սարգսեանի Փետրուարի 12-ի ելոյթի ենթատեքստն ակնյայտօրէն ուղղուած էր նրան: Սարգսեանը յայտարարում էր, որ Ծառուկեանը դուրս է եկել իր վերահսկողութիւնից եւ գտնւում է այլ ազդեցութեան տակ: Հազիւ թէ որեւէ մէկը լրջօրէն մտածի, որ Ռոբերտ Քոչարեանի քաղաքական առնուազն չմարող հաւակնութիւնների պայմաններում Ծառուկեանը կարող է լինել որեւէ այլ ազդեցութեան տակ: Այդպէս առաւել եւս չի մտածի Սերժ Սարգսեանը:*

*Սերժ Սարգսեանի ելոյթն ի ցոյց էր դնում յստակ մտադրութիւնը՝ հեռացնել Ծառուկեանին, որպէսզի արդէն պարզ լինի, թէ ով է նրա թիկունքում: Սարգսեանի ելոյթը հնչեց այն բանից յետոյ, երբ Յովիկ Աբրահամեանը Մոսկուայում հանդիպեց Ռոբերտ Քոչարեանին: Սարգսեանի ելոյթի նախերգանքը կամ նախաբանը հնչեց շատ աւելի վաղ, քան Ծառուկեանը կը գնար Մոսկուա իրավիճակը փոխելու: Յովիկ Աբրահամեանը վերադառնալով Մոսկուայից յայտարարեց, որ Ծառուկեանը շտապել է մի շարք յայտարարութիւններում, եւ եթէ շարունակում է դրանք, ապա դրանց համար կրում է անձնական պատասխանատուութիւն:*

*Ռոբերտ Քոչարեանն իր ներկայիս արձագանքով շարունակեց Ծառուկեանի թիկունքում մնալ, ձգտելով իրավիճակը գնահատել առաւելագոյնս չեզոք դիրքից: Այստեղ ակնյայտ էր Քոչարեանի երկու ուղերձը: Մէկն ուղղուած էր ՀՀԿ-ին: Այստեղ իրավիճակը բաւական լուրջ է: Խնդիրն այն է, որ ներհամակարգային պայքարի, իշխանութեան խնդրի լուծման առանցքում արդէն լոկ Սերժ Սարգսեանի հարցը չէ, այլ ՀՀԿ-ի: Այսինքն, ՀՀԿ-ի ներկայացուցիչներն արդէն լուծում են իրենց հարցը, ոչ թէ Սերժ Սարգսեանին պահելու:*

*Հայաստանի իշխող համակարգում ցուցումով չեն լուծւում այդպիսի խնդիրները: Դրանք լուծելու, որեւէ մէկի հանդէպ այդօրինակ կոնսենսուսային գրոհ կազմակերպելու համար պէտք են յստակ ապացոյցներ, որ այդ մէկը սպառնում է բոլորին՝ ոչ թէ միայն Սերժ Սարգսեանին: ՀՀԿ Խորհրդի նիստը վկայեց, որ Սերժ Սարգսեանն այդ ապացոյցները ներկայացրել է եւ բաւարարել ՀՀԿ-ին:*

*Մինչ այդ, Ռոբերտ Քոչարեանն էր փորձում ՀՀԿ-ի հետ հեռակայ աշխատել: Նրա վերջին հարցազրոյցը, ի դէպ՝ Գագիկ Ծառուկեանի Փետրուարի 5-ի համաժողովից առաջ, պարունակում էր նաեւ հենց այդպիսի աշխատանքի տարր: Քոչարեանը յայտարարեց, որ ներկայիս կառավարութիւնում կան մարդիկ, որոնք գիտեն, թէ ինչ պէտք է անել երկիրը ծանր վիճակից հանելու համար: Այլ կերպ ասած, Քոչարեանը ակնարկում էր ՀՀԿ-ին, որ պատրաստ է դրա մի մասի հետ աշխատել:*

*8 տարի ղեկավարելով համակարգը, նա պատկերացնում է, որ ԲՀԿ-ի այսպէս ասած «ժողովրդականութիւնը» ոչ թէ ՀՀԿ-ին յաղթելու միջոց է, այլ համոզելու, որ աւելի լաւ է պայմանաւորուել իր հետ, քան յոյս դնել Սերժ Սարգսեանի վրայ: Քոչարեանը չկարողացաւ համոզել ՀՀԿ-ին, համոզեց Սերժ Սարգսեանը, որը Հանրապետականների համար արդէն մի քանի տարի կարողացել է ապահովել բացարձակ իշխանութիւն՝ ընդ որում ոչ առանց ԲՀԿ օգնութեան, եւ հիմա բացարձակ իշխանութեան համը մի քանի տարի առաջ ՀՀԿն որեւէ կերպ ունակ չէ լսել անգամ այդ իշխանութիւնը ԲՀԿ հետ կիսելու մասին:*

*Ներկայիս արձագանքով, Ռոբերտ Քոչարեանը փորձում է մէկ անգամ էլ հաւաստիացնել, որ Սերժ Սարգսեանը տանում է դէպի ապակայունացում, ռիսկեր, իսկ ահա ինքը կայունութեան երաշխաւորն է: Ռոբերտ Քոչարեանը ՀՀԿ-ին ակնարկում է, որ կոալիցիոն կայունութիւնը անկայուն բացարձակ իշխանութիւնից աւելի լաւ է:*

*Յաջորդ ուղերձով Ռոբերտ Քոչարեանը թերեւս փորձում է ապահովագրուել առաջինի անարդիւնաւէտութեան հեռանկարից: Այն ուղղուած է Սերժ Սարգսեանին՝ հրադադարի կոչով: Նա Սարգսեանին առաջարկում է հակադրութիւնը տեղափոխել քաղաքական հարթութիւն եւ զերծ մնալ Ծառուկեանի դէմ քաղաքական հետապնդումից, ինչը նրան կարող է ստիպել զանգուածային փողոցային քայլերի դիմել, յղի բոլորի համար ծանր հետեւանքով:*

*Երկրորդ նախագահն այստեղ բացում է ներքաղաքական, կամ*

*Շար.ը էջ 19*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Կառավարութիւնը Թանկարժէք Բնակարաններ է Նուիրել Պաշտօնեաներին

*Հայաստանի կառավարութիւնն առնուազն 28 բնակարան է նուիրել տարբեր գերատեսչութիւնների մի շարք աշխատողների:*

*Ամիսներ առաջ կառավարութիւնն իր որոշմամբ մօտ 755 միլիոն դրամ է յատկացրել՝ Ոստիկանութեան, Ազգային անվտանգութեան, Յատուկ քննչական ծառայութեան, Դատախազութեան եւ Ֆինանսների նախարարութեան տարբեր պաշտօնեաների համար բնակարաններ գնելու համար: Ընդ որում այդ բնակարանները սեփականութեան իրաւունքով են տրուել: Օրինակ, գլխաւոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայեանն անհատոյց 65 հազար դոլարանոց տուն է ստացել Երեւանի էլիտար շէնքերից մէկում: Աւագ դատախազ Սուրէն Խաչատրեանի համար էլ պետական պուտճէյից ծախսել են մօտ 42 հազար դոլար:*

*Ֆինանսների նախարարութեան աշխատակիցներ Քրիստինա Մազմանեանն ու Արմինէ Յովսէփեանը պետպիւտճէի հաշուին դարձել են 57 հազար եւ 42 հազար դոլարանոց բնակարանի սեփականատէր: Ձեռքբերուած բնակարանների արժէքը որոշ դէպքերում հասնում է մինչեւ 117 հազար դոլարի:*

*«Թրանսփարէնսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կազմակերպութիւնն ուսումնասիրել եւ յայտնաբերել է, որ կառավարութիւնը, համարելով անյետաձգելի, 28 բնակարանն էլ գնել է առանց մրցոյթի՝ միեւնոյնն «Միկշին» եւ «Միկմետալ» ընկերութիւններից: Ընդ որում հակակոռուպցիոն կազմակերպութեան փորձագէտ Արտակ Մանուկեանի ուսումնասիրութիւնները ցոյց են տուել, որ սրանք նոյն կազմակերպութիւնն են՝ տարբեր անուններով:*

*«Այդ ընկերութիւնները միեւնոյնն լիազօր ներկայացուցիչն ունեն, որն ամէն պայմանագրում հանդէս է գալիս որպէս կողմ: Այստեղ կայ փոխկապակցուածութիւն, եւ բացառուած չէ, որ ընդհանուր շէնքի սեփականութեան իրաւունքը բաժանուել է երկու մասի: Այսինքն երկու տարբեր ընկերութիւնների սեփականութիւնը կամ բաժնեմասերը վաճառուել են: Երբ որ մէկինը լինէր, դա աւելի կասկածելի գործարք կը լինէր, որ մեծ ծաւալներով մէկ անձից գնումներ են իրականացնում»,- ասաց Մանուկեանը:*

*Մանուկեանն ասում է, որ պաշտօնեաներին թանկարժէք բնակարաններ նուիրելու համար պէտք է յստակ լինի, թէ ինչու են յատկապէս նրանք ընտրուել, ինչու է կառավարութիւնը որոշել աղէտի գօտի ունեցող երկրում պետական աշխատողների բնակարանային պայմանները բարելաւել: Հետաքննող լրագրողների ընկերակցութիւնը բացայայտել է, որ օրինակ գլխաւոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբաեանը բնակարան ունեցել է այն պահին, երբ կառավարութիւնը որոշել է նրան եւս մէկը նուիրել մայրաքաղաքի կենտրոնում:*

*«Սա լրացուցիչ հարցադրումների տեղիք է տալիս»,- ասում է Մանուկեանը.- «Որոնք են այդ չափանիշները... ես փորձում եմ հասկանալ, բայց ինձ համար դեռ անյայտ են դրանք: Եթէ չկան չափանիշներ, ապա նման քայլի իրականացումը խօսում է պիւտճէտային միջոցների անխնայ վատնման մասին»:*

### ՀՀԿ-ն Չի Բացառում ԲՀԿ-ի Հետ Համագործակցութեան Եզրեր Գտնելը

*Հանրապետականը քաղաքականութեան մէջ չի բացառում ոչինչ, անգամ «Բարգաւաճ Հայաստանի» հետ համագործակցութեան եզրեր գտնելը, պատասխանելով «Ազատութեան» հարցին, Փետրուար 18-ին յայտարարեց ՀՀԿ պատգամաւոր, Ազգային ժողովի պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Սահակեանը:*

*«Մեր քաղաքական թիմը մշտապէս նշել է, եւ նաեւ նշում է՝ այն բոլոր քաղաքական ուժերը, քաղաքական գործիչները, ովքեր կը կիսեն այն հիմնական ուղղութիւնները, ծրագրային առումով, որը վերաբերում են մեզ, այնուհետեւ մենք էլ կը քննարկենք այն պատկերացումները, որը կունենան իրենք, կարող է նաեւ լինել [համագործակցութիւն]», - նշեց Սահակեանը:*

*Իրավիճակը մեղմելու՝ Ծառուկեանի փորձից յետոյ հանրապետականները դադարել են «Բարգաւաճ Հայաստանի» ղեկավարի հասցէին շռայլուող ածականները հնչեցնելը:*

*Հաւաքելով կուսակիցներին՝ Հանրապետութեան նախագահ, ՀՀԿ ղեկավար Սերժ Սարգսեանը Ծառուկեանին կոչել էր «կեղծ քաղաքական գործիչ», անդրադարձել նրա կրթական ցածր մակարդակին, անգամ հնչեցրել էր նրա մականունը:*

*«Բարգաւաճ Հայաստանի» գործընկերներից Հայ ազգային կոնգրէսը յայտարարութիւն է տարածել, նշելով, թէ՝ «ըմբռնումով է մօտենում» ուրբաթ օրը կայանալիք հանրահաւաքը չեղեալ յայտարարելու մասին ԲՀԿ յայտարարութեանը:*

### Հիմնադիր Խորհրդարանի Անդամները Դատի Են Տուել ՀՀԿ-ական Գագիկ Մելիքեանին

*Փետրուարի 17-ին Հիմնադիր խորհրդարանը եւ նրա անդամները ընդդէմ ՀՀԿ խմբակցութեան քարտուղար Գագիկ Մելիքեանի հայցադիմում են ներկայացրել Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարան՝ հրապարակայնօրէն վիրաւորանք հասցնելու եւ զրպարտութիւն կատարելու համար նրան օրէնքով սահմանուած կարգով պատասխանատուութեան կանչելու նպատակով:*

*Հիմնադիր խորհրդարանի» տարածած հաղորդագրութիւնում նշւում է. «Յիշեցնում ենք, որ Գագիկ Մելիքեանը մամուլում հրապարակուած իր հարցազրոյցում համոզմունք էր յայտնել, որ Հիմնադիր խորհրդարանի անդամները «100-ամեակը» առանց ռեժիմի» շարժման դէպի Արցախ իրագեկման աւտոերթը «իրականացրել են թուրք-ադրբեջանական փողերով»:*

### Տէր-Պետրոսեանը Մինչեւ Սարգսեանի Ելոյթը Պատրաստ Էր Նրա Հետ Հանդիպել



**ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան**

*ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանն Փետրուար 17-ին հրապարակել է երկրի նախագահին ուղղուած բաց նամակ, որը, սակայն, Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսքով, գրուել է մինչեւ Ծառուկեանի հասցէին Սերժ Սարգսեանի ադմկահարոյց ելոյթը:*

*Քաղաքական հակառակորդին դիմելու շարժառիթը «Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցն է եւ հարցը միջազգային ասպարէզում հաւուր պատշաճի ներկայացնելու խնդիրը»: Նամակը բնորոշելով որպէս «Հայաստանի քաղաքական մթնոլորտի առողջացման բացթողնուած մի պատեհութիւն»՝ Տէր-Պետրոսեանը ընդգծում է, որ մինչեւ Սերժ Սարգսեանի յայտնի ելոյթը պատրաստ է եղել անգամ նրա հետ դէմ առ դէմ հանդիպել:*

*Աւելի վաղ առաջին նախագահը քննադատել էր Ցեղասպանութեան համահայկական հռչակագիրը՝ որակելով այն քաղաքական առումով եթէ ոչ անպայման վտանգաւոր, բայց առնուազն անպտուղ մի փաստաթուղթ, որի պատճառով «Հայաստանը ոչ միայն չի շահի միջազգային հանրութեան համակրանքը, այլեւ կը կորցնի անգամ բարեկամ պետութիւնների աջակցութիւնը»:*

*Միայն մտահոգութիւն արտայայտելը բաւարար չհամարելով՝ առաջին նախագահը, փաստօրէն, պատրաստակամութիւն է յայտնել նաեւ Սերժ Սարգսեանի հետ դէմ առ դէմ հանդիպել՝ «նրա նախընտրած ժամկէտներում եւ պայմաններում՝ այդ խնդրի շուրջ մտքերի փոխանակման նպատակով»:*

*Դէմ առ դէմ հանդիպումից բացի Լեւոն Տէր-Պետրոսեանը Սերժ Սարգսեանին առաջարկել է նաեւ «յանուն գործի շահի» մի խորհրդակցական յանձնաժողով ստեղծել, որի խնդիրը կը լինի Ցեղասպանութեան հարցում Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշման վերջնական յստակեցումը:*

*Առաջին նախագահն անգամ առաջարկել է, թէ ովքեր կարող են, իր համոզմամբ, մասնակցել դրա ստեղծմանը: Մօտ երեք տասնեակ գործիչների շարքում են Լեւոն Տէր-Պետրոսեանի համախոհներն ու հակառակորդները, այդ թւում, օրինակ, Վազգէն Մանուկեանը, Վանօ Սիրադեղեանն ու Գագիկ Յարութիւնեանը:*

*«Որպէս գաղափարի մտայղացող, ես պատրաստ եմ նաեւ անձամբ մասնակցել յանձնաժողովի աշխատանքներին, փոյթ չէ, թէ «ոխերիմ բարեկամներս» ինչպէս կը մեկնաբանեն իմ անսպասելի քայլը: Կարեւորն այս պատասխանատու խնդրում պետական եւ համազգային մակարդակով սխալ թոյլ չտալն է: Մնացած ամեն ինչ չնչին է ու երկրորդական», - գրել է Լեւոն Տէր- Պետրոսեանը:*

*Բաց նամակում Տէր-Պետրոսեանը նշել է, որ «այս հարցը վեր պէտք է լինի ներքաղաքական յարաբերութիւնների ցանկացած նկատառումից», միաժամանակ յետգրութեամբ ցաւով նշում, որ ներկայ պահին «Գագիկ Ծառուկեանի, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան եւ ընդհանրապէս ընդդիմութեան դէմ սանձազերծուած քաղաքական հաշուեյարդարի ու վայրագ բռնութիւնների պայմաններում, այս մտայղացումը հնարաւոր չէ իրականացնել»:*

*Սերժ Սարգսեանի մամուլի խօսնակը 168-am-ի հարցին ի պատասխան նշել է, որ Հանրապետութեան նախագահը ծանօթ է Լեւոն Տէր-Պետրոսեանի բաց նամակին:*

*«Համապատասխան արձագանք կը լինի», - ասել է Արման Սաղաթելեանը՝ չմանսաւորեցնելով, սակայն՝ ի՞նչ ձեւաչափով եւ երբ:*

### «ԲՀԿ-ն Ծնուել է Քոչարեանի Քաւորութեամբ».- Ալեքսանդր Արզումանեան

*«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ծնուել է Բաղրամեան 26-ում՝ Ռոբերդ Քոչարեանի քաւորութեամբ: Այս մասին Փետրուարի 17-ին, լրագրողներին ասաց ՀՀՇ վարչութեան անդամ, ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր, ԱԳ նախկին նախարար Ալեքսանդր Արզումանեանը:*

*Ընդդիմադիր պատգամաւորի խօսքով՝ ՀՀԿ Խորհրդի նիստի ժամանակ Սերժ Սարգսեանի հնչեցրած՝ ԲՀԿ առաջնորդի քննադատութեամբ տրուեց նախընտրական փուլի մեկնարկը:*



**ՀՀՇ վարչութեան անդամ, ԱԺ պատգամաւոր Ալեխանդր Արզումանեան**

*«Ներընտանեկան կռիւ է, ես չեմ ցանկանում խառնուել: Բայց ես բազմիցս ասել եմ, որ մեր տիպի երկրներում անհնար է լինել օլիգարխ եւ ընդդիմադիր, դա բացառուած է: Կան խաղի կանոններ, որոնք թելադրում են լոգիկա»,- ասաց պատգամաւորը:*

*Ինչ վերաբերւում է կարծիքին, որ ԲՀԿ-ի հետեւում կանգնած է Քոչարեանը եւ այս ամենն արւում է նրա վերադարձի համար, Ալեքսանդր Արզումանեանն ընդգծեց, որ դժուար թէ ժողովուրդը ողջունի նրա վերադարձը:*

*«Չեմ կարծում, որ հասարակութեան յիշողութիւնն այսքան կարճ է: Անձամբ չեմ պատկերացնում Րաֆֆի Յովհաննիսեանին եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին Ռոբերտ Քոչարեանի կողքին: Չի բացառւում, որ մի օր էլ կը տեսնենք Քոչարեանին Մարտի 1-ի բացայայտում պահանջելիս»,- նշեց ընդդիմադիր պատգամաւորը:*

# ԼՈՒՐԵՐ

## Թուրքիան Զէնք Գնելիս Կը Սպասի Ցեղասպանութեան Հարցում Արեւմտեան Երկրների Արձագանգին

Անգարան հակաօդային պաշտպանութեան համակարգի համար զենիթահրթիռային համալիրներ մատակարարելու շուրջ բազմամիլիոնանոց գործարքի մասին որոշում կը կայացնի Ապրիլի 24-ից՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած միջոցառումներից յետոյ . Թուրքիան սպասում է այդ իրադարձութիւններին ԱՄՆ-ի եւ եւրոպական երկրների արձագանգին: Այս մասին գրում է «ՌԻԱ Նովոստի»-ն՝ յղում կատարելով «Հիւրիյէթ» թուրքական պարբերականին:

Թուրքիան 2009թ. յայտարարել էր 4 մլրդ արժողութեամբ զենիթահրթիռային համալիրի գնման մրցոյթի մասին: 2013թ. Սեպտեմբերին յաղթող էր ճանաչուել չինական CPMIEC ընկերութիւնը՝ առաջ անցնելով ռուսական, ամերիկեան եւ եւրոպական արտադրողներից: Չինաստանի յաղթանակից յետոյ ՆԱՏՕ-ում Թուրքիայի գործընկերները նրա վրայ ճնշում էին գործադրում, ինչի արդիւնքում մրցոյթի արդիւնքները չեղարկուեցին: Յայտարարուած նոր մրցոյթին մասնակցում են ամերիկեան Raytheon & Lockheed Martin կոնսորցիումն ու եւրոպական Eurosam կոնցեռնը:

«Կառավարութիւնը մինչեւ Ապրիլի 24-ը չի շտապի այս գործարքի մասին որոշում կայացնել: Կարեւոր կը լինի, թէ ինչպէս կարձագանգեն այս երկրները 100-ամեակին»,- գրում է պարբերականը: Պարբերական աղբիւրների համաձայն՝ ամերիկեան եւ ֆրանսիական թեկնածուների միջեւ լուրջ մրցակցութիւն է ակնկալւում: Աւելին՝ երկու ընկերութիւններն էլ գիտակցում են, որ իրենց կառավարութեան կայացրած որոշումից է կախուած գործարքի յաջողութիւնը կամ ձախողումը:

## Ուրուկուէյի Կրթութեան Նախարարութիւնը Յիշատակել է Հայոց Ցեղասպանութիւնը

Ուրուկուէյի կրթութեան ազգային աշխատակազմը ուշադրութիւն կը դարձնի Հայոց ցեղասպանութեանը: Ինչպէս ասուած է աշխատակազմի պաշտօնական կայքում տեղ գտած հաղորդագրութեան մէջ, այս մասին յայտարարել է կառուցի ղեկավար խորհուրդը:

Խորհուրդը հաշուի է առել 50 տարի առաջ Ուրուկուէյի կողմից Ցեղասպանութեան ճանաչման փաստն ու 2007թ. Նոյեմբերին Մերկոսուրի խորհրդարանի 7-րդ լիագումար նստաշրջանում ընդունուած հռչակագիրը:

Աշխատակազմի հաղորդագրութեան մէջ կարճ տեղեկութիւններ են հաղորդւում 1915թ. կատարուած իրադարձութիւնների մասին. «Հայոց ցեղասպանութեան տարեթիւը ընդունուած է համարել 1915. ապրիլի 24-ը: Այդ օրը ձերբակալուեցին Ստամբուլի հայ համայնքի 235 կարկառուն դէմքեր: Դրան յաջորդած օրերի ընթացքում այդ թիւն աճեց մինչեւ 600-ի: Այնուհետ օսմանեան կառավարութեան հրամանով կարգադրուեց աքսորել համայն հայ բնակչութեանը, առանց իրաւունքի բռնագրաւել նրանց պատկանող շարժական գոյքը եւ ոտքով քշել նրանց դէպի անապատներ, որտեղ եւ նրանց մեծ մասը մահացաւ քաղցից, ծարաւից եւ զրկանքներից:

Հայերին պաշտպանելու համար նրանց կցուած ոստիկանները ելուզակների եւ մարդասպանների խմբերի հետ միասին իրենք էին թալանում եւ յարձակւում հայերի վրայ: Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդ Թուրքիայի Հանրապետութիւնը չի ժխտում հայերի կոտորածները, սակայն դրանք չի որակում իբրեւ ցեղասպանութիւն: Հերքելով հայերին բնաջնջելու վաղօրօք մշակած ծրագրերը՝ Թուրքիան դրանք վերագրում է միջէթնիկ կոնֆլիկտներին եւ Առաջին համաշխարհային պատերազմով պայմանաւորուած սովի եւ հիւանդութիւնների առկայութեանը: Սակայն, չնայած սրան, գրեթէ բոլոր գիտնականները, այդ թւում՝ որոշ թուրքեր, վստահ են, որ այս իրադարձութիւնները որակւում են հենց ցեղասպանութիւն եզրով»:

Յիշեցնենք, որ Ուրուկուէյը աշխարհում առաջին պետութիւնն էր, որը 1965թ. ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

## Հայ-Թրքական Արձանագրութիւնները

*Շարունակուած էջ 1-էն*

ձանագրութիւն» եւ «Երկկողմ յարաբերութիւններու զարգացման մասին արձանագրութիւն» ստորագրեցին, որոնք պետք է վաւերացուէին երկու երկիրներու խորհրդարաններուն կողմէ: Սակայն 2009 թուականի Դեկտեմբերին Թուրքիոյ այդ ժամանակուայ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրտողան յայտարարեց որ, Անգարան արձանագրութիւնները չի կրնար վաւերացնել առանց ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման: 2010-ի Ապրիլ 22-ին Սերժ Սարգսեան յայտարարեց հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացման գործընթացը առկախելու մասին՝ հաստատելով, որ Թուրքիան պատրաստ չէ շարունակել սկսած գործընթացը:

Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը արձագանգելով Հայաստանի Նախագահի այս քայլին յայտարարեց, թէ ճիշդ չէն նկատեր Հայաստանի կողմէ արձանագրութիւններու հետ կանչելը խորհրդարանէն:

ԱԳՆ խօսնակ Թանժու Բիլգիչ այս կապակցութեամբ յայտարարած է, որ հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորող երկու արձանագրութիւնները տարածաշրջանի տեսանկիւնէն եւս, Կովկասի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ապահովման իմաստ ունէին: Ան ըսած է թէ, ճիշդ չէն գտներ Հայաստանի քայլը, որ ցոյց տուաւ թէ, արձանագրութիւններու հարցով սկիզբէն ի վեր Հայաստան ոչ անկեղծ եւ անկայուն դիրքորոշում ունէր:

«Այն կարելի է համարել Թուրքիան մեղադրելու համար Հայաստանի նոր քայլ»,- ըսած է Թուրքիոյ ԱԳՆ խօսնակը:

## Սերժ Սարգսեանն Ընդունել է ԵԱՀԿ Մինսկի Խմբի Համանախագահներին



*Նախագահ Սերժ Սարգսեան Հայաստան այցելող ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներուն հետ*

Նախագահ Սերժ Սարգսեանն Փետրուար 17-ին ընդունել է տարածաշրջանային այցով Հայաստանում գտնուող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:

Համանախագահները Հանրապետութեան նախագահին ներկայացրել են Բաքւում իրենց ունեցած հանդիպումների տպաւորութիւնները, քննարկել ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման բանակցային գործընթացի այս փուլում առկայ մտահոգութիւններն ու յետագայ քայլերին վերաբերող հարցեր:

Հանդիպման ժամանակ նախագահ Սերժ Սարգսեանը ողջունել է ս.թ. Յունուարի 27-ին Կրակուում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների յայտարարութիւնը, որը, նախագահի համոզմամբ, որոշակիօրէն տարբերւում էր նախորդ յայտարարութիւններից, որում ի վերջոյ կոչ արուեց Ադրբեջանին հաւատարիմ մնալ հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ուղղուած իր յանձնառութիւններին:

Օր մը առաջ Մինսկի խմբի համանախագահները հանդիպել էին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին: Հանդիպման ժամանակ մտքեր են փոխանակել հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակի եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման հեռանկարի վերաբերեալ:

Ադրբեջանի արտգործնախարարը, լրատուամիջոցների հաղորդմամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Բաքւում պաշտօնական հանդիպումներին ընդառաջ ասել է, թէ Լաչինում, Քելբաջարում հայկական զօրքեր չպէտք է լինեն:

«Պէտք է սկսել լուրջ բանակցութիւններ՝ տարածաշրջանում խաղաղութիւն հաստատելու նպատակով», - յայտարարել է Մամեդյարովը՝ կրկին կիրառելով «օկուպացրած տարածքներ» արտայայտութիւնը:

## Սարգսեան- Ծառուկեան Հաշտութիւն

*Շարունակուած էջ 1-էն*

հաստատելու այս լուրերը, երբ յայտարարեց որ չեղեւ կը յայտարարէ Փետրուար 20-ի հանրահաւաքը: Իսկ իշխանական կողմը դադրեցուց Ծառուկեանի կողմնակիցներուն դէմ առնուած քայլերը:

Հայաստանեան մամուլի որոշ տեղեկութիւններուն համաձայն, հաշտութեան պայմաններէն է, որ Գագիկ Ծառուկեան հրաժարի Ազգային Ժողովի իր պատգամաւորութենէն եւ հեռանայ ԲՀԿ-ի նախագահութենէն:

Դէպքերու նման զարգացման պարագային, Ծառուկեան հաւանաբար դառնայ քաղաքական դիակ, դուրս գալով այդ ասպարէզէն:

Հայաստանի իշխանութիւնները իրենց նման սրընթաց քայլերով, անգամ մը եւս եկան բոլորին հասկցնելու թէ, արտօնուած չէ ընդդիմադիր գործիչ ըլլալ եւ միաժամանակ զբաղիլ գործարարութեամբ: Այդ բնագաւառը վերապահուած է միայն իր կողմնակիցներուն:

## Պետական Քարտուղարի Օգնականը

*Շարունակուած էջ 1-էն*

Նուլընտ դռնփակ հանդիպում ունեցաւ նաեւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Վիքթորիա Նուլընտ անդրադառնալով Հայ-Թրքական արձանագրութիւնները Խորհրդարանէն ետ կանչելու որոշումին յայտարարեց, որ Միացեալ Նահանգները կը հաւատայ, որ Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորումը կը շարունակէ մնալ կարեւոր երկու երկիրներուն համար, նաեւ տարածաշրջանի ամուր խաղաղութեան եւ կայունութեան համար:

Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով տեղակալ Վիքթորիա Նուլընտ յայտնեց որ, Ուաշինկթըն պիտի շարունակէ օգտակար հանդիսանալ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման: «Հայաստան դեռ դուրս չէ եկած գործընթացէն եւ մեզի համար կարեւոր է որ, գործընթացը շարունակուի»,- շեշտեց Նուլընտ: Ան դիտել տուաւ որ, Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ընթացքին քննարկուած են Հայաստանի եւ դրացի երկրներու փոխյարաբերութիւնները, ինչ որ այցի կարեւոր նպատակներէն էր:

Մինչեւ Հայաստան ժամանելը, ամերիկացի դիւանագէտը այցելած էր Ատրպէյճան եւ Վրաստան: Պաքուի մէջ ան Հայաստանին եւ Ատրպէյճանին կոչ ըրած էր զերծ մնալու սահմանային գիծին վրայ իրադրութիւնը սրելու գործողութիւններէն եւ աշխուժացնել ղարաբաղեան հարցի վերջնական լուծման ուղղուած ջանքերը:

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ, ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ՝ ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԵՏ

### «Արցախը կայացած անկախ պետութիւն է, եւ որեւէ այլ տարբերակ, պարզապէս կը բացառուի»

Անցնող 2014 տարուան Յունիսէն ի վեր Ղարաբաղ-Ազրպէյճան սահմանային շրջանի ամբողջ երկայնքով Ազրպէյճանի կողմէ հրադադարի խախտումները եւ սադրանքները դարձած են յաճախակի: Ղարաբաղեան սահմանին գրանցուած լարուածութեան եւ Արցախեան հիմնախնդրի ընդհանուր իրավիճակին մասին «Երիտասարդ Հայաստան» կարճ զրոյց մը ունեցաւ ՍԴՀԿ կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եւ Լիբանանի խորհրդարանի անդամ Ընկ. Սեպուհ Գալփաքեանին հետ:

Ստորեւ հարցազրոյցը:



Հ.- Վերջին շրջանին Ազրպէյճանի կողմէ կատարուած հրադադարի խախտումները եւ սադրանքները դարձած են յաճախակի: Ի՞նչին կը վերագրէք ապահովական իրավիճակի ծանրացումը Ղարաբաղեան սահմանին վրայ:

*Պատ. Անսպասելի կամ արտասովոր ոչինչ կը գտնեմ հոս: Ես ՍԴՀԿ-ի կողմէ տանամեակներով հնչեցուած բազմաթիւ օրինակներ կրնամ բերել, ուր յստակօրէն արտայայտած ենք այս հարցին հետ կապուած մեր դիրքորոշումը:*

*Սակայն, քանի որ հարցը համազգային գերակայ խնդիրներէն մէկուն կը վերաբերի, նախընտրելի է միայն մեր կուսակցական կեցուածքին վրայ չկեդրոնանալ: Թէ Հայրենիքի եւ թէ Սփիւռքի մէջ տեղի ունեցած համաժողովներու կամ այլ պաշտօնական հանդիպումներու ընթացքին, մենք միշտ ըսած ենք, թէ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակ տարելիցին մօտեցնող իւրաքանչիւր օր, ա՛լ աւելի պիտի սաստկացնէ Թուրք-ազերի սադրանքներուն ընթացքը: Եւ, եթէ հարցին նայինք ա՛յս իրողութենէն ելլելով, ապա հայ-ազերի սահմանային լարուածութիւնը ընդամէնը մէկ մասն է այն սադրանքներուն, որոնք միայն իրեն յատուկ յամառութեամբ կը կիրարկէ Թուրք-ազերիական դաշինքը: Ակնյայտ զեղծարարութիւններու եւ քաղաքական աճպարարութիւններու միջոցով Կալիփոլիի ճակատամարտին օրը Ապրիլ 24 տեղափոխելը, Էրտողանին շողոքորթ հրաւէրները, վարչապետ Տաւուտօղլուին յայտարարութիւնները եւ Ալիեւի կամակոր յոխորտանքները նոյն հարթութենէն կու գան: Որպէս հայ մարդ եւ որպէս քաղաքական գործիչ, ես պարզապէս հպարտ եմ, որ մեր սահմանապահ զօրքերը արժանի հակահարուած կու տան այսօրինակ ոտնձգութիւններուն եւ անոնց կողմէ հրահրուած եւ ոչ մէկ սադրանք կը մնայ անպատիժ: Ինչ կը վերաբերի հակառակորդի քայլերուն, ապա հոն ոչինչ կայ նոր՝ նոյն ձեռագիրն է, իսկ այդ ձեռագրին, ցաւօք, քաղաքակիրթ աշխարհը շատոնց ծանօթ է:*

Հ.- Ձեր կարծիքով ի՞նչպիսին կրնան ըլլալ յետագայ զարգացումները:

*Պատ. Նախ եւ առաջ ատիկա աշխարհաքաղաքական որոշ գործօններէ կախեալ է, ինչպէս նաեւ Ատրպէճանի մէջ տիրող քաղաքական անկայուն վիճակէն: Որքան ալ գերտէրութիւնները այսօր կողմնակալ ըլլան եւ իրենց տարածաշրջանային շահերը հետապնդեն, միեւնոյնն է, քօղարկել եւ չանդրադառնալ Ատրպէճանի մէջ տիրող քաղաքական ճգնաժամին՝ չեն կրնար: Նախագահ Ալիեւին ուղղուած Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ եւրոպական գերտէրութիւններու պաշտօնական նախազգուշացումներն ու վերջնագիրները այդ հարթութենէն կու գան: Անոր ուրիշ բան չի մնար ընել, քան ամէն անգամ շահարկել արցախեան խաղաքարթը: Առաջ ատիկա որոշ չափով կազդէր, սակայն հին ու յայտնի ճշմարտութիւն է՝ ժողովուրդը կարելի չէ անընդհատ խաբել: Վերջին քսանհինգ տարուան ընթացքին այդ նոյն երգը տարբեր երանգներով երգեցին Ատրպէճանի բոլոր նախագահները, իսկ անոնց ճակատագրին մասին կարծեմ բոլորը գիտեն: Այս մէկն ալ այդ շարքին մէջ, վստահաբար, բացառութիւն պիտի չկազմէ: Այսօր ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու եւրոպական գերտէրութիւնները քաղաքական աւելի բարդ գործընթացներու մէջ ներգրաւուած են եւ չեն ուզեր յստակեցնել իրենց դիրքորոշումները, սակայն հանգուցալուծումը հեռու չէ: Ամէն պարագայի, ինչ կը վերաբերի Արցախին, այդ մասին երկու կարծիք չկայ: Արցախը կայացած անկախ պետութիւն է, եւ որեւէ այլ տարբերակ, պարզապէս կը բացառուի: Ասիկա ոչ թէ պարզ ցանկութիւն, այլ պատմութեան նմարօրինակ այլ հակամարտութիւններու համեմատութեամբ՝ քաղաքական սթափ վերլուծութեան արդիւնք է:*

Հ.-Ըստ Ձեզի, որո՞նք են արցախեան ազատամարտի հիմնական նուաճումները:

*Պատ. Արցախեան Ազատամարտի նուաճումները թէ բարոյական, թէ հոգեբանական եւ թէ քաղաքական իմաստով այնքան շատ են, որ զրոյցի մը ընթացքին դժուար է բոլորին անդրադառնալ, բայց փորձեմ գոնէ թուցիկ՝ նշել գլխաւորները: Քսաներորդ դարավերջին, հայ ժողովուրդը վերջապէս կրցաւ փշրել Թուրք-ազերիական անպարտելիութեան մասին գոյացած կեղծ առասպելներու ողնաշարը, եւ դանդաղ, բայց հետեւողական սկսաւ ձերբազատուիլ պարտուողի իր բարդոյթէն: Ցեղասպանութիւն վերապրած ժողովուրդի մը համար ատիկա մեծագոյն յաղթանակ էր եւ անշուշտ՝ յետագայ բոլոր յաջողութիւններուն ամուր հիմքը:*

*Չափազանց կարեւոր է նաեւ բռնազաւթուած տարածքներուն վերադարձը, մանաւանդ, որ ատիկա առաջինը եղաւ վերջին կէս հազարամեակի ընթացքին:*

*«Լաւ սկիզբը յաջող գործի մը կէսն է՝ կ՛ըսէ հին իմաստութիւնը: Այդ «յաջող սկիզբի»-ն հիմը դնելու համար հազարաւոր հայորդիներ իրենց երիտասարդ կեանքերը զոհաբերեցին: Մեր հերոսներու շիրիմներուն լուռ ու երախտապարտ մեր խոնարհումը բերելէ ետք՝ յիշենք նաեւ, որ յաջող սկիզբը վերջնական յաղթանակներու գրաւականն է, իսկ այս ճամբուն վրայ մենք դեռ շատ ընելիքներ ունինք, ինչպէս որ շատ են արհեստական խոչընդոտները: Մեզի պարտադրուած արցախեան պատերազմը եւ մեր փառահեղ յաղթանակը լաւագոյն ապացոյցն են այն բանի, որ եթէ կայ կամք, վճռակամութիւն եւ գերագոյն նպատակին հասնելու բռունցքուած ազգային միասնութիւն, ուրեմն անանցանելի արգելքներ ու խոչընդոտներ՝ պարզապէս չկան:*

Զրուցեց ՝ Ս. Ա.
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»
YERIDASART HAYASDAN

---

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ԵԳԻՊՏՈՍ

### ՀԱԿԱ-ՏԱԷՇԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ

*21 եգիպտացի ղպտիներու (քրիստոնեայ) դէմ Լիպիոյ մէջ գլխատման մահավճիռի գործադրութենէն ետք Եգիպտոս կոչ ուղղեց համաշխարհային համագործակցութեամբ կռուիլ Տաէշական (ISIS) անջատողականներու դէմ:*

*Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութիւնը վերանորոգելով իր կոչը պահանջեց անհրաժեշտ միջոցառումներու դիմել որպէսզի միջազգային ընտանիքը գործնականօրէն հակազդէ Տաէշ ահաբեկչական կազմակերպութեան դէմ, որ սկսած է աւերներ գործել նաեւ Լիպիոյ մէջ:*

*Միաժամանակ միջազգայնօրէն ճանաչուած Կիպիոյ վարչապետը կոչ ուղղեց Արեւմուտքին օդային ռմբակոծումներով պարտութեան մատնել ISIS-ի զինեալները, որոնք հակակշռի տակ առած են Թրիփոլի քաղաքը եւ կառավարութեան անդամները մայրաքաղաքէն դուրս քշած: Այս առթիւ վարչապետ Ապտուլլա Ալ Թիննին ըսդգծեց. «Ես հաստատ տեղեկութիւններ ունիմ որ Ալ Քայիտա եւ ISIS Թրիփոլիի մէջ են: Մեծ պետութիւններէն խնդրած եմ որ անխնայ հարուածեն այս զինեալներուն: Անոնք սպառնալիք մըն են Եւրոպական երկիրներուն յատկապէս Իտալիոյ»:*

### ԼԻԲԱՆԱՆ

### ՀԱՐԻՐԻ «ԱՍԿԷ ԵՏՔ ԼԻԲԱՆԱՆ ՉԻ ԿՐՆԱՐ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՆԴ ԴԱՌՆԱԼ»

*Լիբանանի նախկին վարչապետ՝ Ռաֆիք Հարիրիի եւ իր գործակիցներու ահաբեկման տասներորդ տարելիցին առթիւ իր որդին Սաատ Էլ Հարիրի «Մուսթաքպալ» կուսակցութեան միացեալ ժողովին քաղաքական ճառ մը արտասանելով մասնաւորաբար նշեց. «Այսօրուընէ սկսեալ Լիբանան չի կրնար անջատողական քաղաքականութեան թիրախ հանդիսանալ»: Ան իր ելոյթին մէջ նշեց նաեւ անհրաժեշտութիւնը երկրի բոլոր հոսանքներու միասնութեան: Ան կարեւորեց նաեւ Հանրապետութեան նոր նախագահի մը ընտրութիւնն ու պետութեան պատասխանատուութիւնը ահաբեկչութեան եւ անջատողականութեան ու հատուածամոլութեան դէմ պայքարին մէջ:*

*Ներկաները անգամ մը եւս հաստատեցին նահատակ վարչապետի նախաձեռնութեանց այժմէականութիւնը, որոնք կը վերաբերին երկրի տնտեսական եւ ընկերային զարգացման:*

## ՄԱՐՕՔ

### ԼԻՊԻԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԵՐՈՒ ԹՌԻՉՔԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ

*Ալ Արապիա լրատու գործակալութեան համաձայն Մարօքի իշխանութիւնները արգիլած են Լիպիական օդանաւային ընկերութեանց սաւառնակներու թռիչքը իրենց օդային սահմաններուն վրայ:*

*Մարօքի իշխանութեանց համաձայն Լիպիայէն թռիչք առած սաւառնակները չեն յարգեր միջազգային օդանաւորդութեան ապահովութեան չափանիշները: Սակայն, Ռապաթէն ստացուած տեղեկութեանց համաձայն, այս արգելքը պիտի բացառուի Լիպիայէն ետ վերադարձող մարօքցիներուն համար:*

## ՍՈՒՐԻԱ

### B.B.C.-ԻԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԵՏ

*Բրիտանական հանրածանօթ B.B.C. լրատուական գործակալութեան թղթակիցը վերջերս հարցազրոյց մը ունեցած է Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի հետ: Սուրիոյ նախագահն ըսաւ, թէ՝ իր կառավարութիւնը տեղեակ պահուած էր ժիհատիստ ծայրայեղականներու դէմ կատարուելիք օդային յարձակումներէն: Բայց մենք չէինք իմացած մանրամասնութիւններուն մասին: Այնուհետեւ Ասատն ըսաւ՝ թէ ԱՄՆ-ի կողմէ գլխաւորուած եւ Սեպտեմբերին սկսած օդային ռմբահարումներուն կապակցութեամբ մենք համագործակցութիւն չենք ունեցած: Արդարեւ, քաղաքացիական պատերազմը սկսած է թեւակոխել իր 5րդ տարին: Գալով տակառներով ռումբերուն եւ զանգուածային մանուկներու ջարդերուն՝ նախագահ Ասատ հերքած է նման արարքի մը գոյութիւնը եւ ըսած՝ «Մենք ռումբեր, հրթիռներ եւ փամփուշտներ ունինք, բայց ռումբերու տակառներ չունինք»: Ասատ պնդեց նաեւ որ սուրիական բանակը երբեք իր ուժերը չի գործածեր մարդաշատ վայրերու մէջ:*

# ԳԱԼԻՊՈԼԻԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ ԱՐՄԵՆՈՑԻԴԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՐՈԳԱՅԹ

*ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ*

Վերջերս Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը 100-ից աւելի երկրների ղեկավարների, այդ թւում նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, պաշտօնապէս հրաւիրեց մասնակցելու 2015 թ. Ապրիլի 24-ին Ստամբուլում կայանալիք «Խաղաղութեան միջազգային համաժողովին» եւ Դարդանելի (թուրքերէն՝ Չանաքքալէ) ճակատամարտի 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւններին: Ճակատամարտ, որտեղ գերմանացիների վարժեցրած օսմանեան բանակն առեղծուածային եւ անսպասելի յաղթանակ տարաւ ժամանակի ուժեղագոյնը համարուող ֆրանսական եւ բրիտանական ուժերի նկատմամբ:

The power of having a center that hold and nourishes one in productive ways is also reiterated when Archbishop Derderian talks about religion, faith and practice in a modernist world. Readers of the book may themselves feel tumbled and tossed in a world with many issues that trouble us, or confuse us, or that escape our full understanding. When asked a series of questions on the "state" of our world today, His Eminence's answers suggest that it is not a specific "issue" or "problem" that need stop us in our tracks in a contemporaneous moment, but rather that we should consider the universal flow of time, and the march of civilization as it moves forward. And in this regard, the Archbishop's assessments are overwhelmingly positive and life affirming. As His Eminence states: "I firmly believe that the world is a better place today than at any time in the history of mankind. I believe in the progress of humanity, and in our continuous struggle to better ourselves in the world we inhabit. And I believe that every generation has advanced, for millennia… I have nothing but optimism for the future…" (64).

Chapter five, six and seven in the book contain conversations that all relate to the larger themes of the Church, the Homeland and the Armenian Diaspora. And once again the reader will note, that as with the interconnected concepts of faith, commitment and action, the Church, Homeland, and the Diaspora are likewise interdependent, and the nexus of those three concepts create a whole where faith and purpose can reside.

When asked about his priorities for the many ways he must function as an Archbishop of the Armenian Apostolic Church, His Eminence responds in a way that shows his awareness of the practical in the midst of the spiritual: Speaking of the Western Diocese and building a new Armenia he cites three principal points of focus and action: The clergy, Christian education, and re-visioning the Diocesan organization structure to better serve the community. As the Primate of the Western Diocese of the Armenian Church of North America sums up the future of the Church: "[M]ore churches, more members, more projects, more programs, more activities … more work" (104). Although I was not present at this conversation, I imagine His Eminence said those words with great enthusiasm.

Continued on page 4

# Peace of Art Commemorates the Centennial of the Armenian Genocide with Billboard Displays




By Rosario Teixeira

BOSTON – In commemoration of the centennial of the Armenian Genocide, beginning January 2015 and through the end of the year, Peace of Art, Inc., has begun to display large electronic panels in the United States. The first of such electronic displays is in Massachusetts; located on Route 1 in Foxboro, about 1/4 mile from Gillette Stadium and Patriot Place. The images and the messages on the electronic displays pay tribute to the victims, refer to the Armenian Genocide, as well as all other genocides that took place during the past one hundred years following the Armenian Genocide.

Peace of Art, Inc., president Daniel Varoujan Hejinian said that "We are sending a message of peace to the world, to condemn the past crimes of genocide, and resolve that no other nation be the next target of genocide." With the electronic billboards, Peace of Art's message is that genocide continues to be a threat to humanity, it urges viewers to condemn the crime of genocide, be alert, "don't be the next victim," and put an end to this crime against humanity once and for all.

The first of the electronic billboards reads "Condemn the Past, Don't Be the Next Victim. Remember 1915 the Armenian Genocide." Within the word "Genocide" the letter "O" is a target.

The second of the electronic billboards will read " In Remembrance of all Genocide Victims 1915-2015. The Centennial of the Armenian Genocide." Within the word "Genocide" the letter "O" is a circle with the flags of countries that have recognized the Armenian Genocide and within the circle is a dove, a symbol of peace.

Since 1996, the artist Daniel Varoujan Hejinian has been displaying large billboards in Massachusetts to inform the community at large to the reality of the Armenian Genocide. In 2003, Hejinian founded Peace of Art, Inc. a non-profit organization, that uses art as an educational tool to bring awareness to the universal human condition, and promote peaceful solutions to conflict. The organization is not associated with political or religious organizations, and its focus is on the global human condition. www.PeaceofArt.org. Since then, Peace of Art, Inc., has sponsored the billboards to commemorate the Armenian Genocide.

# Turkey, the Legacy of Silence

## A transmedia documentary about silence around the Armenian genocide

PARIS – For the past two years, Anna Benjamin and Guillaume Clere are driven by the desire of giving voice to the descendants of the Armenian genocide survivors. In February 2015, the two French journalists are close to reach their goal: achieving a documentary and a web-series relating the story of four Turks who discovered their Armenian origins… and who decide to break silence. To achieve their project, they launched a crowdfunding campaign during two months.

Through the portraits of Nazli, Armen, Dogukan and Yasar, Turkey, the Legacy of Silence reveals the weight of silence, still burdened by thousands of Armenian descendant families in Turkey. Indeed, after 1915, the price of survival was high: assimilation in Turkish and Kurdish families, conversion to Islam, and above all, stay quiet. Since then, the secret has been kept. After a century of silence, History is reappearing: multiple families are now proclaiming the Armenian heritage of their ancestors. By giving a face to the million of descendants of these Islamized Armenians, Turkey, the Legacy of Silence is a worldwide call to the duty of remembrance. Today, despite risks, fear and shame, Nazli, Armen, Dogukan and Yasar have the courage to break the taboo on their Armenian roots and show their faces. https://vimeo.com/114534321

Turkey, the Legacy of Silence will be released internationally for the Commemoration of the Armenian genocide in April 2015: on TV as a 52' documentary film, and on Internet as a multi episode web-series. Additionally, the public will be invited to offer testimony on the website. The documentary arouses interest : during April it will be broadcasted in France (Paris, Valence, Vienne) and in United States (starting in Glendale…)




Yet, to reach these goals, the authors still need to raise funds. In order to reach an international audience, the film must be translated in English and in Armenian in a first phase. In a second phase, the web-series must be edited and embedded in an interactive web site. https://vimeo.com/116566232

For the project, Anna & Guillaume went four times in Turkey: scouting Anatolia finding Armenian descendants and shooting the images of the film. The documentary is actually being edited. It still has to be standardized, translated, developed, and illustrated…

With the help of their producer, Découpages, they obtained several guarantees such as the broadcast of French channel Toute l'Histoire and a writing and production help allowed by the CNC (Centre National du Cinéma et de l'image animée). They also obtained the agreement of famous medias such as France Info and Mediapart to host the web-series.

Today, Anna & Guillaume relay on public's generosity to honor the memory of Armenian History, to mark the genocide century and to reveal the silence.

# US Assistant Secretary of State

Continued from page 1

pete equally here that not only protects the investment environment and protects the country's democracy, but also closes the space for outside interference in your economy," said Nuland.

After meetings with the leaders of Armenia in Yerevan and previously with the leaders of Azerbaijan in Baku the senior U.S. diplomat said she felt "we did make progress in both capitals."

"I spoke to both [Azerbaijani] President [Ilham] Aliyev and [Armenian] President [Serzh] Sarkisian on this trip about ending the bloodshed which serves nobody. I felt that we did make progress in both capitals on this visit, and I hope to see peace in coming days and weeks in the interest of all of the soldiers serving and all of the parents, and in the interest of peace and stability in the region," she said.

Speaking at a press conference in Baku on February 17, Nuland said she would talk in Yerevan about the release of two Azerbaijani nationals convicted and jailed in Nagorno-Karabakh for crimes, including a teenager's murder.

Addressing the case in Yerevan today, the U.S. official described what the two Azerbaijanis did as a "terrible crime". At the same time, she repeated her appeal for their handover to Azerbaijan. "I did speak about the terrible crime that was committed, it was obviously a crime. That said, we do call on relevant authorities to make the kind of humanitarian gesture that I spoke of at my previous press event," Nuland said.

The U.S. assistant secretary of state also addressed the issue of the 2009 Turkish-Armenian protocols on normalization of ties between the two nations that Armenian President Sarkisian decided to recall from the parliament earlier this week.

In doing so, the Armenian leader stressed that "the Turkish government has no political will, distorts the spirit and letter of the protocols, and continues its policy of setting preconditions."

Despite this decision, Nuland said, it is important for Washington that Armenia has not withdrawn from the process.

"From an American point of view we believe that the normalization between Armenia and Turkey remains important for both countries and remains important for the region as a whole and for regional peace and stability. So, we will continue to promote it," Nuland said. "I think that what's important to note is that Armenia has not withdrawn from the process and that's also important to us that the process can continue."

Victoria-Nuland4Earlier on Wednesday the U.S. assistant secretary of state visited Yerevan's Tsitsernakaberd memorial to some 1.5 million Armenians massacred during the Ottoman-era Genocide in Turkey. Just like former U.S. Secretary of State Hillary Clinton in 2010, Nuland described her visit as a "private" one.

"It was a very moving stop today at the memorial. I have never personally had a chance to go, and it was obviously an important part of my visit here today," Nuland said.

# Faith in Action:

Continued from page 3

As I said above, my purpose in writing this piece was not to examine Alepian's book and the conversations contained in the volume, in a formal or scholarly fashion. Rather, I wanted to write about what remains with me after having closed the book. So I would like to end with an answer to a question asked of Archbishop Derderian where his answer is once again simple and thus powerful: When asked about the purpose and context of the Church in our world, the answer given, is that the Church should provide both love and moral compass. And in his answer Archbishop Derderian returns once more to his perpetual conviction of putting into practice, the abstract: "Love is not a passive emotion, it is an active verb" (141). And he clarifies, that by moral compass he does not mean dictating rules for living for the masses, but rather engaging in an active "expression of the teachings of Christ".

No doubt other readers of this volume will remember the conversations differently than I have, and I believe, therein we find the value of listening in on these conversations – their value and their power.

# Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
# ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԱՅԴ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

*ՍԱՄՈՒԷԼ ՅՈՎԱՍԱՓԵԱՆ*

*Անցեալ տարի Բեռլինում հրատարակուել է Գերմանացի յայտնի թղթակից, հրապարակագիր, քաղաքական մեկնաբան եւ բազմաթիւ գրքերի հեղինակ՝ Պետեր Շոլ-Լատուր-ի գիրքը՝ «Չար արարքի անէծքը» խորագրով: Անտեսելով գրքում տեղ գտած որոշ անճշտութիւններ, կարելի է ասել, որ այս գիրքը արաբական երկրներում արեւմուտքի գործադրած քաղաքականութեան մի անաչառ վերլուծութիւն է: Եւ քանի որ այդ «կործանարար միջամտութեան» անմիջական զոհերն են նաեւ այդ հիւրընկալ երկրներում հաստատուած սփիւռքահայերը, ապա այստեղ հայ հանրութեանն է ներկայացւում այդ գրքից որոշ հատուածներ:*

*Գրքի շապիկի չորրորդ էջում այսպէս է ներկայացւում գրքի բովանդակութիւնը.*

*Խմորւում ու եռում է ամէնուր, Սիրիան ու Իրաքը գնալով ընկղմւում են մի ահաւոր՝ բոլորը՝ բոլորի դէմ, քաղաքացիական պատերազմի մէջ: Թուրքիայում իշխանութեան համար պայքար է գնում իսլամական եւ աշխարհական ուժերի միջեւ: Եգիպտոսը մշտական խռովութեան թատերաբեմ է դարձել, բայց նաեւ աշխարհի այս անհանգիստ տարածաշրջանի հիւսիսային եզրերում՝ Կովկասում եւ Ուկրաինայում, դրութիւնը պայթունային է: Իրեն յատուկ սուր դիտողութեամբ Պետեր Շոլ-Լատուրը լոյս է սփռում մի շրջանի վրայ, որտեղ թւում է թէ, արեւմուտքի տասնամեակներ շարունակ քաղաքական եւ ռազմական միջամտութեան շնորհիւ, ինչ որ մի անէծք է իջել, կործանարար միջամտութեան, այդ՝ «չար արարքի անէծքը»:*

*Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ Ամերիկան, այսպէս կոչուած «քաղաքակիրթ աշխարհի» պարագլուխը, անընդհատ պատերազմների մէջ է եղել: Նա, տարբեր երկրներում, որտեղ որ հնարաւոր է եղել, տեղական բանակի՝ գեներալների միջոցով, կատարել է պետական յեղաշրջումներ՝ Իրան, Լատին Ամերիկա, Աֆրիկա, կամ հրահրել է պատերազմներ, Իրաք-Իրան, այժմս Սիրիա, կամ ինքը անմիջական, իր ամբողջ ռազմական հզօրութեամբ, իհարկէ բացի ատոմային, մղել է տեղական պատերազմներ, Կորիա, Վիետնամ, Կամբոջա, Սերբիա, Իրաք, Աֆղանստան:*

*Մենք այսօր էլ լաւ ենք յիշում այն պատկերները, թէ ինչպէս էին Վիետնամում՝ մերկ, վառուող, լացող երեխաները փախչում ամերիկեան հերթական նապալմ ռումբերից, որոնցով Ամերիկան ժամանակին վառեց հարաւային Վիետնամի անտառների համարեա՛ եօթանասուն տոկոսը, անհամար տառապանքներ պատճառելով տեղի խաղաղ բնակչութեանը...*

*Հանրութեանը յայտնի այս իրողութիւնները այստեղ յիշելը, անգամ եւս կարեւոր է, որպէսզի մտաբերել, թէ այսօր արաբական երկրների ժողովուրդների ողբերգութիւնը, այն նոյն քաղաքականութեան շարունակութիւնն է, որը գործադրել եւ այսօր էլ գործադրում է արեւմուտքը, բոլորից առաջ սակայն ԱՄՆ-ը: Մենք նաեւ լաւ ենք յիշում, ժամանակին Դաշնային Գերմանիայի կանցլեր՝ Հելմուտ Շրոդերի եւ արտաքին գործերի նախարար՝ Յոշկա Ֆիշերի յամառ դիմադրութիւնը եւ փաստարկները, Իրաքի պատերազմի դէմ, երբ ԱՄՆ- ը CIA-ի կողմից հնարած կեղծ փաստաթղթերի հիման վրայ, ջանում էր Եւրոպայի երկրներին էլ ներքաշել այդ պատերազմի մէջ:*

*Նրանք պատճառաբանում էին, որ վաղը ո՞վ է պատասխան տալու՝ Միջին Արեւելքի, Աֆրիկայի ու Ասիայի իսլամական երկրների քաղաքական ապակայունացման ու ներքին խռովութիւնների համար:*

*Շատ տարիներ չեն անցել այդ ժամանակներից, բայց այսօր արդէն նրանց մարգարէութիւնը սոսկալի իրականութիւն է դարձել եւ ներկայումս ամբողջ մի շարք ժողովուրդներ Ասիայում ու Աֆրիկայում ներքաշուած են քաղաքացիական պատերազմների մէջ: Ժամանակին ԱՄՆ-ը՝ Պակիստանում զինելով թալիբաններին՝ Աֆղանստանում ՍՍՀՄ-ի ներկայութեան դէմ, ծնունդ տուեց իսլամական ծայրայեղ այնպիսի մի կազմակերպութեան, որը չարորակ ուռուցքի նման, գնալով աճելով, այսօր արդէն հիւծում է տարբեր ժողովուրդների խաղաղ կեանքը, վտանգում է ամբողջ տարածաշրջաններ, մղում քաղաքացիական պատերազմներ: Այսօր արդէն ցաւալի փաստ է, որ այդ երկրներում հաստատուած սփիւռքահայութիւնն էլ ըստինքեան եւ անմիջական ներքաշւում է այդ յորձանուտի մէջ...*

*Եւ պէտք չէ բոլորովին էլ յոռետեսական հնչի, եթէ ասել, վտանգը կայ, որ եթէ ապագայում՝ Իրանում, Ռուսաստանում եւ Թուրքիայում ծայրայեղ իսլամիստները ուժեղանան եւ փորձեր անեն, այդ երկրները ապակայունացնել, ապա դրանց ալիքները նաեւ Հայաստանին են հասնելու: Այդ պատճառով էլ այսօր համայն աշխարհի հայութիւնը պէտք է արթուն լինի եւ որտեղ որ հնարաւոր է, ակտիւօրէն մասնակցի ծայրայեղականների դէմ ժողովուրդների պայքարին:*

*Պետեր Շոլ-Լատուրը, ով Գերմանիայի եւ Ֆրանսիայի հանրութեանը յայտնի է որպէս արաբական աշխարհին քաջածանօթ եւ գիտակ անձ, իր այս գրքում ոչ հերթականութիւնն է պաշտպանում եւ ոչ էլ ժամանակագրութիւնը: Նա իր առաջ խնդիր է դրել, ուսումնասիրել եւ վերլուծել վերջին տարիներին արաբական աշխարհում տեղի ունեցած «ժողովրդական» շարժումների էութիւնը, ինչպէս նաեւ տարբեր քաղաքական հոսանքների գործունէութիւնը եւ դէպքերը: Այդպիսով նա ջանում է արեւմուտքի, ամէնից առաջ սակայն գերմանացի ընթերցողներին պարզաբանել մի կործանարար քաղաքականութեան հետեւանքները, որը բանեցրել եւ բանեցնում են արեւմտեան շահամոլ պետութիւնները: Դա նրանց համարեա՛ երկու հարիւր տարի տեւող միջամտութիւնն է այդ երկրների ներքին քաղաքական կեանքին, որի ջատագովն են այդ երկրների պաշտօնական անձինք, նրանց քարոզչութիւնը, աջ, ոչ պաշտօնական պահպանողական ուժերը, կուսակցութիւնները, ինչպէս նաեւ նրանց կողմից թողարկուած մամուլը:*

*Նա, որպէս անխոնջ ժուռնալիստ, այցելել է պատերազմի դաշտեր, զրոյց է ունեցել տարբեր երկրների ղեկավարների, պատերազմող կողմերի՝ հրամանատարների հետ: Մօտիկից վկան է եղել Իրաքի, Աֆղանստանի, Լիբիայի, Սիրիայի ժողովուրդների տառապանքներին: Վկայում է, որ Իրաք-Իրան պատերազմը ծագել է ոչ այնպէս, որ Իրաքի արշաւանքը Քուէյթի վրայ, կատարուել է այն բանից յետոյ, երբ Ամերիկան իր դեսպանի միջոցով խրախուսել է Սադամ Հուսէյնին: Իրաք-Իրան պատերազմում, երբ Իրանի զօրքերը հազարաւոր պատանի զինուորների կեանքի գնով, կտրում անցնում էին ականապատուած դաշտերը եւ որ պատերազմի շրջադարձ էր սպասւում յօգուտ Իրանի, ԱՄՆ-ն Իրաքին բազմապիսի զինամթերքի առաքումով եւ Իրանին զինադադար պարտադրելով, կասեցնում է Իրանի առաջխաղացումը եւ յաղթանակը:*

*Այսօր Սիրիայում, քաղաքացիական պատերազմի հետեւանքով, տնաւեր, փախստական են դարձել մօտ հինգից-ութը միլիոն ժողովուրդ, ընդ որում մօտ մի քանի տասնեակ հազար հայ, զոհուել են աւելի քան հարիւր հազար մարդ եւ դեռ ոչ մի կանխագուշակում չի կարելի անել, թէ այդ ամէնը ինչով կը վերջանայ:*

*Հեղինակը Սիրիայի դէպքերի մասին հետեւեալն է գրում.*

*«Արաբական գարուն»,*

*Այս խօսքը այլեւս բոլորովին լսել չի լինում:*

*Թունիսում իսկապէս որ տարերային պայթիւն տեղի ունեցաւ՝ Բեն Ալի-ի բռնատիրական կարգերի դէմ:*

*Իսկ եթէ անդրադառնանք Եգիպտոսում՝ Թահիր հրապարակում ընթացող իրադարձութիւններին, որտեղ երիտասարդութեան կողմից պայքար էր գնում ազատութեան համար, եւ վերլուծենք, թէ դա ինչպէ՞ս կատարուեց, ապա կարելի է այստեղ եգիպտական «Մուխաբարատի», անվտանգութեան ծառայութիւնների, սակայն ամէնից առաջ բանակի կողմից որոշակի գաղտնի սադրանքներ եւ կեղծումներ ենթադրել:*

*Լիբիայում ԱՄՆ-ն որոշակի յապաղումով ասպարէզ մտաւ, տեղի ընդդիմադիր ուժերին օգնութիւն ցոյց տալու համար: Պէտք էր Բենգազիում, որտեղ, իբր թէ ժողովուրդը ընդվզել էր, որպէսզի դեմոկրատիա եւ խօսքի ազատութեան պահանջներ ներկայացնել, դիմակայել Ղադաֆի-ի ոչ քիչ տատանուող ռազմաուժին, ժողովրդի մէջ մի ահաւոր սպանդ չկազմակերպել...*

*Սակայն Սիրիայում հարցերը բոլորովին այլ կերպ էին դրուած: ԱՄՆ-ը, Սաուդեան Արաբիայի եւ Իսրայէլի համագործակցութեամբ, չսպասեցին մինչեւ Դերայում Պաշար էլ-Ասադ-ի դիկտատուրայի եւ նրա՝ ալաւիների կողմից գերիշխող, Պաաս կուսակցութեան դէմ, առաջին ցոյցերի սկսուելուն, որպէսզի յետոյ խարխլեն այդ պետականութեան հիմքերը: Դեռ շատ վաղուց, ամերիկեան ու եւրոպական մամուլում, մի անսանձ հալածանք էր սկսուել արաբական այս հանրապետութեան դէմ, որը իր բիրտ կեցուածքով հանդերձ, որը նա շատ յաճախ նաեւ գործադրում էր, միակ աշխարհիկ պետականութիւնն է ամբողջ արաբական աշխարհում: Իսկ այն օրից, երբ Պաշար էլ-Ասադը իր անգութ հօր՝ Հաֆէզ էլ-Ասադին յաջորդեց, Դամասկոսը համեմատած արեւմուտքի կողմից նախընտրած դաշնակից երկրների մայրաքաղաքների հետ, դրանք լինեն՝ Սաուդեան Արաբիայի, Քաթարի, Միացեալ Էմիրաթների, թէ Քուէյթի, իրենից ներկայացնում է՝ կրօնական հանդուրժողականութեան եւ համարեա՛ արեւմուտքի կենսապայմանների նման մի քաղաք:*

*Ինչ որ տեղ, գաղտնի հրամանատարական վայրերում, կեղծ տեղեկատուութիւններ թողարկող այդ գաղտնի ֆաբրիկաներում, որոնք անգլօ-սաքսոնական, կարծիքներ ապակողմնորոշող ուժերի կողմից*

*Շար.ը էջ 19*



# ԶՕՐԱՎԱՐՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ ԿԱՄ ՅԻՇԵԼՈՎ ՇԱՐԼ ՏԸ ԿՈԼԸ

**ՍԱԳՕ ԱՐԵԱՆ**

«Այստեղ Անգլիայէն կոչ կ՛ուղղեմ ֆրանսական ցամաքային, ծովային եւ օդային բոլոր ուժերուն միաւորուիլ եւ կռուիլ յանուն մեծ ֆրանսայի: Պատերազմը միայն Ֆրանսացիներու պատերազմը չէ, այլ բարոյական արժէքներու եւ այդ արժէքները կրող երկիրներու պատերազմն է, որոնք մերժած են ստրկութեան գաղափարը եւ մերժած են ընդունիլ նուաստացումը»: Այս խօսքերը կը պատկանին Ֆրանսայի 5-րդ Հանրապետութեան կնքահայր համարուող՝ Զօր.Շարլ Հանրի Տը Կոլին: Տը Կոլ իր ամէնէն նշանաւոր ճառին մէջ յայտարարած էր, թէ ճակատամարտ մը կորսնցնելը չի նշանակեր ամբողջ պատերազմին պարտութիւնը: Երկրորդ Աշխարհամարտի ծանր օրերուն, երբ աւերուած Ֆրանսայի մէջ անհնար էր հայրենասէր զօրավարին խօսքը լսել, պատմական այդ ճառը կը տարածուէր քաղաքէ քաղաք: Ծանր պատերազմական գործողութիւններէ ետք, 25 Օգոստոս 1944-ին Տը Կոլ յաղթանակած մուտք կը գործէր Փարիզ: Զօրավարը 1946-ին մէկ տարուան ժամկէտով կը ստանձնէ երկրի առժամեայ կառավարութեան վարչապետի պաշտօնը եւ քիչ անց կը հրաժարի: Այնուհետեւ ան կը համալրէ ընդդիմութեան շարքերը եւ կը հիմնադրէ »Ֆրանսացի Ժողովուրդի Միասնութիւնը« անունը կրող կուսակցութիւնը: 1957-ին Տը Կոլ ներքաղաքական համաձայնութեան հիման վրայ կը դառնայ Ֆրանսայի 4-րդ Հանրապետութեան վերջին վարչապետ: Այնուհետեւ կը ձեռնարկէ կարեւոր սահմանադրական փոփոխութիւններ եւ կը հիմնադրէ Ֆրանսայի 5-րդ Հանրապետութիւնը:

1968-ին Բողոքի մեծ ալիք կը բարձրանայ ամբողջ Ֆրանսայի մէջ: Երկխօսութեան հաւատացող Տը Կոլ կ՛առաջարկէ ապակեդրոնացման ինքնակառավարման նպաստող քուէահամար կազմակերպել: Արդիւնքները անբաւարար կ՛ըլլան եւ Տը Կոլ առանց աղմկելու կը հեռանայ իշխանութենէն՝ նուիրուելով յուշագրութեան: Նշեմ, որ Տը Կոլ երկու անգամ ընտրուած է երկրի նախագահ (1958,1965):

Արդի Ֆրանսայի պատմութեան մէջ կարեւորագոյն դրոշմ թողած 79 տարեկան Տը Կոլ կը մահանայ 1970-ին:

Զօրավարներու ժամանակէն մնացած այս զօրավարին մասին նիւթը միշտ եղած է մտքիս առանցքին մէջ: Տը Կոլ այն զինուորականն էր, որ պատերազմը յաղթելէ ետք մտնելով քաղաքական ասպարէզ կրցաւ դիմագրաւել բոլոր վերիվայրումները:

Սա այն դէպքն է, որ զօրավարը կը մոռնայ հայելիին մէջ նայիլ: Կը հանէ իր եսը զինուորական տարազէն ու գլխարկէն: Իր ուսադիրները կը քակէ եւ ունեցած աստղերը կ՛անտեսէ: Զօրավարը կը յաջողի, քանի գիտէ, որ մարտի դաշտին վրայ կիրարկուած աշխատելաոճը շատ յաճախ խաղաղութեան օրերուն անյարիր է: Քաղաքական կեանքին մէջ զինուորական ըմբռնումները կը տանին պառակտումի եւ աւերի: Այս ըմբռնումներուն վերաբերեալ Տը Կոլի ունեցած ամէնէն ուշագրաւ կեցուածքը անոր 1969-ին քաղաքական կեանքէն հեռանալու որոշումն է:

Ան չէ գինովցած իր գրանցած յաղթանակներով ու ամենակարեւորը չէ յղփացած: Օրինակ, իր երկրին մէջ կատարած կարեւոր սահմանադրական փոփոխութիւններէն բացի, Ալճերիա երթալով մեծ ճիգեր կը գործադրէ վերջ տալու Ալճերիոյ քաղաքացիական պատերազմին: Զօրավարը կը հասկնայ, որ անկարելի է բռնի ուժով տիրապետութեան տակ պահել, ոչ միայն Ալճերիան, այլ բազում ափրիկեան երկիրներ: Զինուորական հաստատութիւնը շատ մը երկիրներու մէջ անմիջականօրէն առնչուած է քաղաքական կեանքին եւ երկիրը ղեկավարելու օրինաչափութիւններուն հետ: Լիբանանի օրինակը առնուազն կը վկայէ այն մասին, որ վերջին շուրջ 20 տարիներուն Լիբանանի հանրապետութեան նախագահները իշխանութեան հասած են բանակէն:

Ինչ կը վերաբերի Հայաստանի քաղաքական կեանքին, Արցախեան պատերազմի ընթացքին տասնեակ զօրավարներ նոյնպէս կարեւոր պաշտօններ գրաւած են Հայաստանի քաղաքական վերնախաւին մէջ: Զինուորականներու մուտքը քաղաքական կեանք բաւական դժուարին ճանապարհով կ՛ընթանայ: Հրամանատարները յաճախ կը մոռնան, որ քաղաքական կեանքին հետ առնչուիլը նման չէ պատերազմի դաշտին թելադրած օրէնքներուն: Հոն զինուորական կանոններ չեն գործեր եւ աւելին զինուորական վարուելակերպը ջրբաժան կը ստեղծէ հրամանատարին եւ հանրութեան միջեւ: Լիբանանեան բանակի նախկին հրամանատար Զօր. Միշէլ Աունն օրինակ, որ իր արկածախնդրական գործելաոճով բաւական ծանր իրավիճակներու հիմնական հեղինակը դարձաւ, յաճախ մոռցած է, որ քաղաքական կեանքին մէջ որպէս զինուորական գործելաձեւերը երկիրը կրնան անդունդ հասցնել:

Ինչ ալ ըլլան քաղաքական հանգամանքները լիբանանցիներուն (յատկապէս քրիստոնեաներուն համար) չեն մոռցուիր Աունի թոյլ տուած խոշոր սխալները, որոնց հետեւանքով երկիրը երկու ծանր պատերազմներու մէջ յայտնուեցաւ: Սակայն ինչ խօսք քաղաքական կեանքին մէջ յիշողութիւնը կարեւորագոյն գործօն մը չէ: Ինչ է Տը Կոլ չէր կրնա՞ր բռնի ուժի դիմելով ճզմելու 1968-ի յեղափոխութիւնը: Անշուշտ կրնար, բայց շատ լաւ գիտէր, որ այդ վարքը զինք պատմութեան աղբամանը պիտի նետէ:

Վերջին ամիսներուն Հայաստանի քաղաքական առօրեային մէջ պատահած դէպքերը բաւական խորհելի, անախորժ եւ տխրեցնող երեւոյթներու դէմ յանդիման կը դնեն մեզ: Արցախեան ազատամարտի մասնակից Ժիրայր Սէֆիլեան եւ իր համախոհները վճռած են ամէն գնով քաղաքական նոր իրավիճակ ստեղծել: Այս ընդհանուր ձեւաչափին մէջ պէտք է տեղադրել նաեւ անոնց («Հիմնադիր խորհրդարան») Արցախ տալիք այցելութիւնը: Ուր ԼՂՀ իշխանութիւններու միջամտութեամբ երթը կը կասեցուէր: Ժիրայրն ու իր ընկերները «յարձակման» կ՛ենթարկուէին: Ծեծի հետեւանքով քանի մը մասնակիցներ (որոնց շարքին ինքը՝ Սէֆիլեանը) կը վիրաւորուէին ու աւելի քան 15 ինքնաշարժներ կը վնասուէին: Քանի մը օր ետք «Հիմնադիր խորհրդարան»ը հանդէս կու գար մամլոյ ասուլիսով եւ իր համակիրներէն օժանդակութիւն կը խնդրէր (ըսեմ, որ ըստ «Ազատութիւն» ռատիոկայանին անոնց կրած նիւթական վնասները կը գնահատուէին՝ 35.000 ամերիկեան տոլարով): Չմոռնամ ըսել, որ Սէֆիլեան շուրջ ամիս մը առաջ Ստեփանակերտի մէջ ընդունուած էր ԼՂՀ Նախագահ Բակօ Սահակեանին կողմէ, ուր Սահակեան Սէֆիլեանին բացատրած էր, որ Արցախի մէջ «աւտոերթ» կատարելը նպատակայարմար չէ:

Հայաստանի քաղաքական ներքին պայքարները եւ իշխանութեան հետ հակամարտելու գետինը Արցախ փոխադրելով «Հիմնադիր խորհրդարան»ը շնորհակալ գործ մը չըրաւ: Աւելին անտեղի լարուածութիւն ստեղծեց: Եղան բերաններ, որոնք ստայօդ յայտարարութիւններով ուզեցին Արցախը տարանջատել Հայաստանէն եւ խտիր դնել Արցախի ու Հայաստանի միջեւ: Ինչ կը վերաբերի Հայաստանի ընդդիմութեան, կամ այսպէս ըսած «ընդդիմադիր եռեակ»ին, անոնք եւս դատապարտելէ բացի ոչինչ ըրին (ու պարզ է, որ պիտի չընէին): Ներկայիս մտավախութիւն կայ, որ Սէֆիլեան ու իր ընկերները կը շարունակեն իրենց «աւտոերթ»երու շարքը եւ ջանք կը տանին յառաջիկայ 24 Ապրիլին, այսինքն Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նշման օրը փողոց իջնել «ռէժիմէն ձերբազատուելու համար»: Անոնք չեն ուզեր այսօրուան վարչակարգը: Չեն ուզեր նաեւ ընդդիմութիւնը: Կը յայտարարեն, որ Հայաստան պէտք է օր առաջ ռէժիմէն ձերբազատուի, սակայն չեն խօսիր իրենց ունեցած ծրագրին մասին:

Իշխանութեանց համար եւս Բերձորի միջադէպը բաւական տհաճ իրավիճակ ստեղծեց: Փաստ է նաեւ, որ իշխանութիւնը Բերձորի մէջ կատարուածէն ետք յաջողեցաւ շարժումին բազկերակը շօշափել: Ցեղասպանութեան նշումը համահայկական բեմահարթակի գլխաւոր օրակարգն է ու իշխանութիւնները պիտի չուզեն, որ այդ օրը այդպիսի արարքներ արձանագրուին: Ոչ միայն իշխանութեան այլ ամբողջ հայութեան համար այդ օրը կարեւոր է:

Այս ընդհանուր իրավիճակին դիմաց յուսալի է, որ մեր ժողովուրդի բոլոր զօրավարները հասկնան, որ այս պահը ուսադիրներուն նայելու եւ հիացմունք ապրելու պահը չէ: Ներքաղաքական օրակարգերը մէկ կողմ եւ մեր աչալրջութիւնը ու այսօր գոյացած միասնութեան խնդիրը այլ կողմ:

Պէտք եղածը մեծ զոհողութիւններ չի պահանջեր: Եւ վստահ եմ, որ մօտիկ անցեալին Պէյրութը ձգելը եւ Արցախեան ճակատներուն վրայ կռուիլը շատ աւելի մեծ զոհողութիւն կը պահանջէին քան այս պահուն պէտք եղած լրջութիւնը:

Յ.Գ. Այս յօդուածը միտում չունի զուգահեռներ գծել Շարլ Տը Կոլի եւ ուեւէ մէկուն միջեւ: Մտեցում մըն է, ըսելու համար, որ կան նաեւ Շարլ Տը Կոլի նման խորագէտ, պատմական պահուն իմաստը ըմբռնող եւ այդ պահու թելադրանքներով առաջ նորդուող ազգակերտ զինուորականներ:







# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԿԵՐՈՅԹԸ



Paramus, NJ - Season ճաշարանի շքեղ սրահը Փետրուարի 7-ին լեցուն էր հիւրերով, որոնք եկած էին մասնակցելու Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) եւ Հայկազեան Համալսարանի շքեղ հացկերոյթին, հովանաւորութեամբ Սերժ եւ Անիթա Պուչագճեաններու: ԱՀԱԸ-ի Վարչական Խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ Հայկազեան Համալսարանի Հոգաբարձուներ, շրջանաւարտներ եւ հիւրեր եկած էին մեծ սիրով մասնակից ըլլալու այս հաւաքոյթին եւ քաջալեր հանդիսանալու արտերկրի միակ հայկական համալսարանին:

Իր Բարի Գալուստի խօսքով, Հայկազեան Համալսարանի Հոգաբարձութեան անդամ Սերժ Պուչագճեան, իր անկեղծ զգացումները արտայայտեց Հայկազեան Համալսարանի 60-ամեակին կապակցութեամբ, ուրկէ ան շրջանաւարտ եղած էր տարիներ առաջ: Որքան պատահական էր, որ Հայկազեան Համալսարանը եղած էր ենթահողը իր բարձրագոյն ուսման եւ ապագայ աշխատանքին՝ տիեզերանաւութեան (aerospace) ճարտարարուեստին մէջ, որմէ երկու տասնամեակ առաջ, Միջին Արեւելքի մէջ արտադրուեցաւ առաջին հրթիռը՝ գլխաւորութեամբ Մանուկ Մանուկեանի՝ համագործակցութեամբ Հայկազեան Համալսարանէն խմբակի մը հետ: Պրն. Պուչագճեան ընդգծեց նաեւ թէ, Հայկական ինքնութեան պահպանման կողքին, Հայկազեան Համալսարանը, իր ջամբած ուսումէն անդին նաեւ մեծ ազդեցութիւն կ՚ունենայ իր աշակերտներուն կեանքին մէջ: Ան կը սորվեցնէ հանդուրժողականութիւն եւ կը սնուցանէ հասկացողութեան մշակոյթ մը գաղափարներու ազատ փոխանակման՝ տարբեր ազգերէ եւ դաւանանքներէ եկած աշակերտներուն միջեւ: Ան հպարտօրէն կոչեց Հայկազեան Համալսարանը ,

Համալսարաններու ադամանդ մը, մաղթելով որ ան շարունակէ բարգաւաճիլ իր 60-ամեակէն անդին ալ:

Բըրէմըսի Հայ Երիցական Եկեղեցիի Հովիւը՝ Վեր. Պերճ Կիւլէյեան մատուց ճաշի օրհնութեան հոգեշունչ աղօթք մը:

ԱՀԱԸ-ի Նորընտիր Գործադիր Տնօրէն Զաւէն Խանճեան՝ մեծ հաճոյքով ըսաւ՝ թէ ուսումը միշտ եղած է Հայ Աւետարանական Եկեղեցիին ներդրումի կորիզը հայ ազգին: Ան շարունակեց ըսելով՝ թէ Հայ Աւետարանական Համայնքը եղած է ռահվիրայ ստեղծելու կրթական հաստատութիւններու հսկայ ցանց մը, մանկապարտէզէն մինչեւ նախակրթարան եւ երկրորդական վարժարաններ, եւ բարձրագոյն կրթութեան հաստատութիւններ, ինչպէս՝ համալսարաններ եւ Աստուածաբանական ճեմարաններ: Հայ Աւետարանական Եկեղեցին եղած է ռահվիրայ եւ ջատագով կանացի ուսման, ինչպէս նաեւ երաժշտութեան եւ ֆիզիքական դաստիարակութեան բնագաւառներու ներմուծման կրթական ծրագիրներու մէջ, բարձրացնելով մեր ժողովուրդին ուսման, զարգացման եւ մշակութային մակարդակը: Հայոց Ցեղասպանութիւնը մեր գոյութեան բունը կացինահարեց: Ան ոչնչացուց անհամար երազներ եւ կանխարգիլեց ազգային անսահման կարողութիւնները,- ըսաւ ան: Բայց մոխիրներուն մէջէն կրկին փիւնիկը երեւան ելաւ, եւ ԱՀԱԸ-ը հիմնուեցաւ 1918-ին: Ուսումը դարձեալ գրաւեց իր առաջնահերթութեան դիրքը: Դպրոցներ կառուցուեցան կրկին եւ տարածուեցան ամէնուրէք ուր մեր ազգի մնացորդացը ապաստան գտաւ: Տեսլականութիւն ունեցող մարդիկ գործի անցան եւ ԱՀԱԸ-ի հետ գործակցաբար ծնունդ տուին Հայկազեան Համալսարանին: Պրն. Խանճեան իր խօսքը ամբողջացուց գնահատելով այն մարդասիրական ոգին, որ նեցուկ կանգնած է բոլոր այն մարդկանց ջանքերուն, որոնք այս հաստատութեան ետին կանգնած են:

Որպէս գնահատանք, Պրն. Խանճեան Սերժ եւ Անիթա Պուչագճեան ամոլին, որոնք նոյն օրը կը նշէին նաեւ իրենց ամուսնութեան տարեդարձը, նուիրեց Մայքըլ Արամի Նոյան Տապանը եւ Արարատ Սրբազան Լեռը ներկայացնող քանդակ մը՝ որպէս խորհրդանիշ դժուարութիւններ յաղթահարելու եւ նորանոր բարձրունքներ նուաճելու:

Հայկազեան Համալսարանի Նախագահ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան իր շնորհակալութիւնը յայտնեց հիւրընկալ զոյգին եւ ԱՀԱԸ-ին ու անոր Վարչական Խորհուրդին իրենց աջակցութեան համար: Ան նշեց, թէ՝ 2015-ը կը զուգադիպի Համալսարանի 60-ամեակին եւ թէ շարք մը գործունէութիւններ եւ տօնակատարութիւններ կը ծրագրուին Պէյրութի, Տուպայի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Բայց ասոնց մէջէն ամէնանշանակալիցը այն է, որ մեր այս հաստատութիւնը կոչուած է յայտնի դաստիարակ Արմենակ Հայկազեանի անունով, որ զոհը եղած է Հայոց Ցեղասպանութեան, եւ մենք պատուելով զինք, մեծարած կ՚ըլլանք նաեւ անոր մեզի թողուցած ժառանգութիւնը:

Ի՞նչ է մեր պատասխանը այն հարցին, թէ Հայկազեան Համալսարանը տակաւին հաւատարիմ եւ յաջո՞ղ է իր առաքելութեան մէջ, -հարցուց Դոկտ. Հայտօսթեան: «Մեր շրջանաւարտները շատ լաւ կ՚ընեն իրենց բարձրագոյն ուսման ծրագիրներուն մէջ, աշխարհի ամէն կողմերը: Անոնք յաջող գործերու ասպարէզի մէջ են: Կրթաթոշակի գրասենեակը Համալսարանին ամէնէն գործունեայ կեդրոնն է եւ ասոր վկայութիւնը Սուրիահայ աշակերտներու մեր նպաստն է: Մեր շրջանակին մէջ լուսաբանական, հետազօտական եւ հրատարակչական ջանքերը արդիւնաբեր են, եւ մենք պարբերաբար կը կազմակերպենք գիտաժողովներ եւ կրթական միջոցառումներ: Տակաւին կը պատրաստենք առաջնորդներ մեր ազգին համար եւ կամուրջներ կը կառուցենք տարբեր խմբակներու միջեւ: Կանգուն պահելու համար մեր այս ջանքերը, մենք պէտք ունինք բոլորին շարունակական եւ առատաձեռն աջակցութեան, աւելի նշանակալից ձեւով քան առաջ»:

Ծոյս Փիլիպոսեան Սթայն՝ Հայկազեան Համալսարանի ջատագովը, տասնամեակներ շարունակ, իր ծնողներուն՝ Ստեփան եւ Սրբուհի Փիլիպոսեաններու հետքերուն հետեւելով ուրախութեամբ արձագանգեց այս կոչին, իր շարունակական մարդասիրական ջանքերով օժանդակելու, որպէսզի Հայկազեան Համալսարանը կարենայ շարունակել իր գերազանցութեան մակարդակը հաստատ պահել գալիք տարիներուն՝ իր ուսանողներուն համար: Անոր դուստրը՝ Թինա Սեկել, կը շարունակէ իր հաւատարմութիւնը բարձրագոյն ուսման այս հաստատութեան, որ տակաւին կը մնայ որպէս կրթութեան փարոս մը՝ հակառակ երկար տարիներու փորձութիւններու եւ փորձանքներու: Թինայի ուղեկցութիւնը Հայկազեան Համալսարանին հետ սկսած էր երբ ան իր տան մէջ յաճախ լսած էր ԱՀԱԸ եւ Հայկազեան բառերը իր մօրմէ եւ հօրեղբօրմէ: Այդ իր մէջ հետաքրքրութիւն մը յառաջացուցած էր եւ այցելելով Համալսարանը իր ծնողքին ընկերակցութեամբ, սկսած էր իր բարեսիրական գործունէութիւններուն, հետեւելով իր ծնողներու՝ Ծոզէֆի եւ Ծոյսի օրինակին:

Հայկազեան Համալսարանի բարեկամներ եւ շրջանաւարտներ, ինչպէս նաեւ ԱՀԱԸ-ի Վարչական Խորհուրդի Նախագահ եւ Հայկազեան Համալսարանի Հոգաբարձութեան Նախագահ՝ Տօքթորներ Նազարէթ եւ Անի Տարագճեաններ, Հայկազեան Համալսարանի Հոգաբարձութեան անդամներ՝ Կէրի Ֆիլլիփս եւ իր տիկինը Արսինէ, Յասմիկ Պարան եւ ամուսինը՝ Արսէն, Հէրի Նաճարեան եւ տիկինը Շէրըլ, Ռապըրթ Քիւրքճեան, ԱՀԱԸ-ը Վարչական Խորհուրդի Նախկին Նախագահ Էնտի Թորիկեան, ԱՀԱԸ-ը Արեւմտեան ափի Գործադիր Տնօրէն՝ Լեւոն Ֆիլեան, Տօքթ. Ռաֆֆի եւ Շողակ Յովհաննէսեաններ, Խորէն եւ Սեդա Նալպանտեաններ, Մորիս եւ Պերճուհի Կիւլէսէրեաններ եւ շատ շատեր ունեցան ուրախալի երեկոյ մը՝ համեղ ճաշերով եւ երգ ու պարով եւ այս բոլորը բարի նպատակի մը համար: Ի վերջոյ, ինչպէս Սերժ Պուչագճեան գեղեցիկ կերպով նկարագրեց, «Տաքութիւնը կը ջերմացնէ մարմինը, բայց բարեկամութիւնը կը ջերմացնէ հոգին»:

## «ՍՓԻՒՌՔ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ« ԾՐԱԳԻՐ

Հարգելի հայրենացիկներ,

Սփիւռքի հայ համայնքներում ազգային ինքնութեան պահպանմանն ու զօրացմանը, երիտասարդների շրջանում հայոց լեզուի իմացութեան մակարդակի, հայկական կրթօճախների ուսուցիչների, կրթական գործի պատասխանատուների, մշակութային խմբերի ղեկավարների որակաւորման բարձրացմանը, Սփիւռքի ԶԼՄ-երի, երիտասարդական կազմակերպութիւնների գործունէութեանը, ինչպէս նաեւ համայնքների ինքնակազմակերպմանն աջակցութեան նպատակով ՀՀ սփիւռքի նախարարութիւնը Երեւանի պետական համալսարանի հետ համատեղ 2015 թ. շարունակում է «Սփիւռք» ամառային դպրոց» ծրագիրը:

«Սփիւռք» ամառային դպրոցում գործելու են դասընթացներ վեց ուղղութիւններով.

1. Հայոց լեզուի արագացուած ուսուցում,
2. Կրթօճախների հայոց լեզուի ուսուցիչների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում,
3. Սփիւռքի լրագրողների դասընթաց,
4. Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսոյցների վարպետութեան դասընթացներ,
5. Սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դասընթաց,
6. Սփիւռքում համայնքային գործի կազմակերպիչների դասընթաց:

Ծրագրի մասին տեղեկատուութիւն կարող էք ստանալ՝ այցելելով նախարարութեան www.mindiaspora.am կայքէջ եւ «Հայերն այսօր»՝ www.hayernaysor.am էլեկտրոնային թերթ:



# ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆՆ ԱՍՈՒՄ ԷՐ՝ »ՍՊԱՍԵՆՔ, ՍՏԵՂԾԵՆՔ, ԿԱՆՉԵՆՔ, ՄԻ ՔԻՉ ԷԼ ԻՆՔՆԵՐՍ ԼԻՆԵՆՔ՝ ԿԸ ԳԱՅ ԿԱՄ ԱՐԴԷՆ ԻՍԿ ԵԿԵԼ Է ՄԵՐ ՄԷՋ«

ԱՐԱՑԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ինքը «Լուսաւոր մենատների, մաքուր այգիների, առողջ երեխաների, հմուտ բանուորների, գիտակ բժիշկների, անպիղծ բանաստեղծների» երկրին էր հաւատում: Մենք՝ չհաւատացինք: Մենք մեր մենատներն ու այգիները իրենով պիտի լցնէինք, Կոմիտասով պիտի լցնէինք, Թումանեանով, Չարենցով պիտի լցնէինք, որ իր երկիրն ունենայինք, որ երկիրը մերը լինէր, որ երկիրը պետութիւն լինէր, մարդով լինէր, սիրուած հայրենիք լինէր: Մենք մեր երեխաներին իրենով, Կոմիտասով, Թումանեանով, Չարենցով պիտի կերտէինք, որ իր երազած առողջ երեխաներն ունենայինք, որ առողջ երեխաները երեխայ ունենային: Չարեցինք, չենք անում:

Ինքն ասում էր. «...Մեր ներսի անպատասխանատու ալարկոտի հետ դաշնակցած, մեր գործն ու վարքը կապում ենք՝ որպէս թէ դեմոկրատական շարժման, որպէս թէ բռնակալութեան տապալման, որպէս թէ անկախ պետութիւնների համագործակցութեան անհեռանկարայնութեան հետ, եւ որպէս թէ ահա մենք ինչ-որ մի բանի առաջամարտիկներ ենք: Մինչդեռ ինքներս պիտի լինէինք մեր գլխի տէրը, երէկ՝ նախկին հանրապետութեան, այսօր՝ այս նոր հանրապետութեան առջեւ մեր պարտականութիւնները կատարէինք բծախնդրութեամբ... Երէկ բանակը չենք լիցքաւորել հայկական ուժերով, երէկ առաջադրուած բարեփոխումները չենք լցրել հայկական մտքի եւ ուժի կարողութեամբ, չենք ենթարկուել երէկուայ մեխանիզմին եւ չենք ենթարկւում այսօրուայ մեխանիզմին–շատ անպատասխանատու ենք...»:

Մենք իրեն չհասկացանք: Մենք իրեն չենք հասկանում: Մենք ամէն տեղ որոնում ենք փրկութիւնը: Այսօր, անամօթօրէն, նոյնիսկ տգիտութեան մէջ ենք որոնում, տգիտութիւնն ենք փառաբանում, տգիտութեան հետ ենք դաշնակցում երեսպաշտօրէն, բայց չենք գնում դէպի ինքը, որովհետեւ տգէտների հետ մեր ճանապարհին ենք, որովհետեւ տէրերին սպանեցինք, բզկտեցինք, բծախնդրօրէն զբաղուեցինք միայն ինքնաոչնչացմամբ, ու էսպէս անտէր-անտիրական գնում ենք դէպի-ոչինչ:

Ինքն ասում էր. «...Մենք անընդհատ ասում ենք՝ չենք արել, չենք արել... Ո՞վ էր անելու, ինչո՞ւ չի արել: 1988 թուականից յետոյ բոլոր յաջորդ իշխանութիւնները կրկնել են նախորդների սխալները եւ աւելացրել են սեփականը: Մենք ինչո՞վ ենք, օրինակ, լաւը բաբելացիներից, ասորեստանցիներից, միւսներից, որոնք կորան գնացին. գուցէ մենք էլ ենք կորել, պարզապէս դեռ չենք գիտակցում...»:

Իսկ գուցէ գիտակցուած ենք գնում բաբելացիների, ասորեստանցիների, միւսների ճանապարհով:

Ինքն ասում էր. «...Քո ազատութեան սահմանները մինչեւ իմ ազատութեան սահմաններն են...»: Իսկ մենք: Մենք ասում ենք իմ ազատութիւնը սահման չունի ու էսպէս անսահմանօրէն տրորում ենք մեր ճանապարհին հանդիպող ամէն ինչ, մարդուն ենք անգամ տրորում, որովհետեւ ազատ ենք, ազատօրէն տրորում ենք պետութիւն, եկեղեցի, բանակ, տրորում ենք



ամէն կողմից:

Ինքն ասաց. «...Հոկտեմբերի 27-ի ազգային աղէտը 29-ին պէտք է բացայայտած, փակած, կնքած, պատմութեանը յանձնած եւ մենք արդէն երեք տարի հոգով աղքատների մեր ճանապարհին լինէինք՝ ջհանդամը թէ մեր նոյն երթի մէջ ունենալով մեղաւոր ու անմեղ բոլորիս՝ դաւադիրների եւ անտեղեակների, աղէտի ահռելիութեան առջեւ չփոթահարների եւ մարդկային մեր որակը թաքուն զննողների...»:

Բայց մենք չգտանք հոգով աղքատների մեր ճանապարհը: Աւելին: Մենք միշտ նոր հոկտեմբեր քսանեօթերի ենք պատրաստ, միայն թէ իր ասած հոգով աղքատների ճանապարհին չլինենք:

«...Մթնոլորտը, ոչ, չի պարզուել. դեռ դարաններ են սքօղւում, դեռ դղեակներ են յօդս ցնդելու, դեռ արիւնոտ հաշուեյարդարներ են լինելու, Հայն ու Հայը, Հայն ու Հայաստանը դեռ անցնելիք ճանապարհ ունեն իրարից հեռանալու...»:

Ու այսպէս հարիւր տարուայ մէջ մէկ ու կէս պետութիւն կորցնելով, մէկը գտնելով, հազարաւոր քառակուսի քիլոմեթրեր կորցնելով, Ծովից ծով կորցնելով՝ մի քանի քառակուսի քիլոմեթր գտել ենք, բայց շարունակում ենք Հայն ու Հայաստանն իրարից հեռացնել ու հեռացնում ենք անընդհատ: Հեռացնողների պակաս չկայ: Ազգային հեռացնողներ կան, դեմոկրատ հեռացնողներ կան, ամէն տեսակ հեռացնողներ կան: Պակաս չկայ:

Իսկ ինքն ասում էր. «...Պէտք է մտածէինք պահանջատիրոջ մասին եւ ոչ պահանջատիրութեան: Պէտք է սիրէինք այս Հայրենիքը, հոգայինք այսօրուայ հոգսը: Այլապէս, հնարաւոր է, վաղը պահանջատիրութիւնը բաւարարուի՝ մէջտեղը պահանջատէր չլինի, մանաւանդ որ այսպէս մի անգամ արդէն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունէք...»:

Ու հիմա, անմոռուկներ շաղ տալով անժողովուրդ մեր ճանապարհներին, դարձ ենք անում ի շրջանս իւր: Իսկ ինքն ասում էր. «...Փարախը միայն մեզ համար է փարախ. Նրանց համար՝ ովքեր փարախից անդին են, դէպի ուր կամ ում մենք ձգտում ենք՝ դա ամենեւին էլ փարախ չէ – արիւնոտ ու անարիւն յաղթանակներով սահմանուած պետական սահման է: Համոզուած լինենք միայն մի բանի մէջ՝ որ պաշարողներից անդին մեր արեան ու հաւատի եղբայրները չեն կամ եթէ նոյնիսկ են՝ խնդրի դժուարութեան առջեւ երես են դարձնելու մեզնից, անհասկացող են ձեւանալու կամ անհասկանալի ենք լինելու իսկապէս»:

Ինքը դասի նման ասում էր. «Թուրքը, ոչ, չի ճանաչելու ցեղասպանութիւնը, չի ընդունելու՝ թէ ինքը ցեղասպան է, Նրա կոմունիստը չի ընդունել-Նրա ազգայնականը չի ընդունելու. ես ամէն առաւօտ ծանր չկամութեամբ եմ կանգնում պահանջատիրոջ իմ օրուայ դէմ – Նա՝ Նրա քաղաքագէտը, պոէտը, ուսանողը, դիւանագէտը՝ ինչու էր իր համար հոգս դարձնելու իր մեծ ցեղի իւրաքանչիւր անդամին յիշեցնել՝ թէ սա մեղքի ու պարտքերի մէջ խրուած է. Թուրքը իր հողը չի բաժանելու, իր ամբողջը չի կոտորակելու: Ուրեմն արժէ՞ ջանք ու քրտինք թափել մի քարի վրայ՝ որ չի ճաքելու եւ հակառակը՝ մեզ է ճաքեցնելու, բռնած գնալ ու գնալ մի բաւիղով՝ որ ելքի նշան չի նշում: Չարժէ, բայց չենք կարող չգնալ, ջանք ու քրտինք չենք կարող չթափել: Մի բանստոյգ կարող ենք-մտածել մեր երեխաների մասին եւ չխելագարուել, ասել է՝ մեզ չափի բերել, մեզ մեր չափին բերել, տեղաւորել մեզ բանականութեան սահմաններում, Աստծոյ օրուայ առջեւետ քաշել սեւ վարագոյրը մեր երեխաների դէմից, ողբի ու տառապանքի պատ չկապել ողջ հանրութեան ու իւրաքանչիւր անհատի շուրջը, միեւնոյն է, նրանք գլուխներն այդ պատին ծեծելով չէ որ ապրում են, նրանք երգի ու օրհներգի իրենց օրուայ մէջ ոխն ու ողբը մի համեստ անկիւնում ծուարած են տեսնում..»:

Մեր հազարամեակներով չհասկացածն ինքը հասկացել էր: Ու ինքը մեզ համար եզրահանգում էր անում.

«Պիտի սպասէինք այս օրին, պիտի սպասէինք այս չարութեանը, այս դաժանութեանը, այս աղքատութեանը: Պիտի սպասէինք, այսպէս էլ պիտի լինէր: Մեր վիճակի դրամատիզմն այն է, որ հեռուստատեսութիւնը, մամուլը, մի խօսքով՝ խօսքի աշխարհը, որ իր հմայիչ դրսեւորումներն է ունեցել ոչ մեզանում, հեռուստատեսութեան, լրագրի, կոմունիկացիաների արագացման այս պայմաններում եկել պարտադրւում են մեզ, իսկ մենք աղքատ ազգականի վիճակում ենք: Հոգիներս, որ ահա պիտի թեւածելիս լինէր, կամ թեւածում է Արեւմուտքի ստեղծած սիմուոլների աշխարհում, աշխատանքի ու ազատութեան մաքուր երկինքներում, մտքներս դարձեալ ասիական այս աղբի մէջ է: Իսկապէս վիճակներս շատ ողբերգական է:

Էլի պիտի աննիւթ լոյսը առաջատար դարձնենք, թէ մեր ժողովրդի բարոյական կառոյցը աւելի պինդ կը լինի, քան այսօր մեզ խփող այս փոթորիկները, եւ կը կանգնենք: Կորուստները կան: Մի կողմից դրախտի տեսքով Ամերիկան է դռները բացել, միւս կողմից ասիացի վայրենին է խփում, կորուստները կան, բայց դրանց հետ պիտի հաշտուենք եւ էլի լոյսներս շրջենք դէպի այն ժողովուրդը, որ վաղուայ օրով մնացորդ է լինելու եւ որի վրայ պիտի ծաղկի վաղուայ Հայաստանը...:

Մենք հազարամեակներով չէինք հասկացել: Ինքը հասկացել էր նաեւ մեր փոխարէն: Ինքն ամբարել, ամփոփել, մէկտեղել, բերել էր մեզ, բայց մենք էդ հասկացածը նոյնիսկ ալարեցինք հասկանալ: Կամ՝ չուզեցինք հասկանալ: Կամ՝ անկեղծ լինենք՝ ուղղակի միտքներս կաղեց:

Ինքն ասում էր. «Երկրները առհասարակ պարտւում են իդեոլոգիաների պարտութիւնից յետոյ, մշակոյթների պարտութիւնից յետոյ, երկրները, պետութիւնները զօր ու զօրքով գրոհում են, իհարկէ, մշակոյթների նախնական գրոհումներից յետոյ: Եւ մի մշակոյթը տեղի է տալիս մի այլ մշակոյթի, որից յետոյ յաջորդում է գրոհող երկրի զօրքերի ներխուժումը»:

Շատ լաւատես չեմ, բայց մի յոյս կայ: Ինքն ասում էր հայը՝ «Չի ընկնում մինչեւ յատակը» ու ասում էր «Ոչ մի գեղ ու ցեղ իրեն անռուստոմ չի թողել, սպասենք, ստեղծենք, կանչենք, մի քիչ էլ ինքներս լինենք՝ եւ կը գայ կամ արդէն եկել է, մեր մէջ է»:

Յ.Գ. Հրանտ Մաթեւոսեանի հատորներն այսօր աշխարհի առնուազն հինգ լեզուով թարգմանուած պիտի լինէին Հայաստան պետութեան առաջնորդութեամբ ու հազարներով աշխարհի գրախանութների պատուաւոր դարակներում պիտի լինէին, բայց՝ չեն: Մաթեւոսեանի հատորներն այսօր աշխարհի համացանցային հսկայ գրախանութների առաջնային ցանկերում պիտի լինէին, բայց՝ չկան: Հայաստան պետութեան դեսպաններն այսօր գրականութեան տօն պիտի անէին իրենց հիւրընկալ երկրներում, բայց՝ տօնի չեն: Հայկական եթերն այսօր մաթեւոսեանական պիտի լինէր առաւօտ կանուխից, բայց չէր, ինչպէս երէկ տէրեանական չէր, ինչպէս երէկ չէ առաջին օրը սահեանական չէր, ինչպէս դրա նախորդ օրը կոմիտասեան չէր: Անհիձորի լաւ ասֆալտ ճանապարհին այսօր ուխտագնացներ պիտի լինէին ու ուխտագնացների առաջնորդները հայոց հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդները պիտի լինէին, բայց՝ ուխտի չեն: Հայկական լոբբիները Մաթեւոսեանական գրականութեամբ պիտի աշխարհի կինոարտադրողների դռներին լինէին՝ թէկուզ անմոռուկները պիջակներին, բայց, վստահաբար՝ չեն: Մաթեւոսեանական աշխարհ պիտի լինէր այսօր, մաթեւոսեանական տօն, բայց՝ չկայ:

Մաթեւոսեանի գերեզմանին գնացինք, անշուշտ: Հայկական եթերն ազդարարեց՝ վարչապետի առաջնորդութեամբ: Կարմիր վարդերը սիրուն էին, վարչապետը, նոյնիսկ, արտիստիկ էր բաւականին: Գերեզման գնալ սիրում ենք: Մեր տէրերին միայն գերեզմանում ենք սիրում: Գուցէ Մաթեւոսեանի կենացն էլ խմենք՝ լռուայ քաշած արաղով: Իսկ Մաթեւոսեանն ասում էր «Մշակոյթը ապրելու կերպ է, ոչ թէ կեանքի զարդարանք»:

www.massisweekly.com
Updated every Friday

## ՖՈՒԹՊՈԼԱՍԷՐ ՓՈՔՐԵՐԸ ՊԷՏՔ Է ԶԳՈՅՇ ԸԼԼԱՆ…

Մարզական աշխարհին մէջ անսովոր չեն ֆիզիքական վէրքերը, գլխու ցնցումները եւ դժբախտաբար կարգ մը պարագաներուն՝ մահը: Այս երեւոյթները յաճախ կը պատահին ֆութպոլի խաղերու ընթացքին, ուր անկարելի է բոլորովին խուսափիլ գնդակի ուժեղ ցնցումներէն: Ֆութպոլիստներ յաճախ գնդակը կը հարուածեն իրենց գլուխով:

Ֆութպոլը վերապահուած չէ միայն չափահասներուն կամ մասնագէտ ֆութպոլիստներուն: Յատկապէս միջին արեւելեան երկիրներու մէջ ֆութպոլով կը զբաղին նաեւ փոքրերը: Գոյութիւն ունին փոքրերու յատուկ ֆութպոլի խումբեր, ակումբներ, մարզիչներ, եւայլն: Այս խաղը նաեւ ընդհանրացած է դպրոցներու մէջ:

Վերջերս կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ փոքր տարիքի ընթացքին կանոնաւոր կերպով ֆութպոլ խաղալը կրնայ նուազեցնել անձին յիշողութիւնը եւ թերացնել տրամաբանութեան եւ մտածելու կարողութիւնները: Այս ու սումնասիրութեան մաս կազմած են աւելի քան 173 հազար փոքրեր:

Արդիւնքները ցոյց տուած են թէ փոքր տարիքին այսինքն՝ 12 տարեկանէն նուազ փոքրերու պարագային ֆութպոլ խաղալը կրնայ մինչեւ 20 առ հարիւր համեմատութեամբ նուազեցնել անոնց յիշողութեան եւ տրամաբանութեան կարողութիւններու մակարդակը: Ֆութպոլի պարագային ամէնէն վտանգաւոր հարուածները գլխու հարուածներն են, որոնք կրնան պատճառ դառնալ ուղեղային լուրջ ցնցումներու:

## ԿԱՆՈՒԽ ՔՆԱՆԱԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ Կ՛ՕԳՆԷ ՃՆՇԵԼՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԻՏՔԵՐԸ

Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ մարդիկ, որոնք սովորութիւն ունին ուշ քնանալու եւ որոնց քունը ընդհատուող է՝ աւելի յաճախ կը տառապին բացասական միտքերէն քան այն մարդիկ, որոնք կանուխ կը քնանան:

Հետազօտութեան նպատակը եղած է ուսումնասիրել կապը քնանալու ժամի եւ կպչուն բացասական միտքերու միջեւ:

Հեղինակները կրկնուող բացասական միտքերը կը բնորոշեն իբրեւ վերացական կրկնուող միտքեր՝ բացասական փորձի եւ անձնական խնդիրներու չեշտադրութեամբ, որոնք դժուար է կառավարել:

Այսպիսի միտքեր ունեցող մարդիկ սովորաբար շատ անահանգստացած են իրենց անցեալով կամ ապագայով, իսկ այդ կպչուն միտքերը կրնան չափազանց յոգնեցուցիչ ըլլալ:

Հետազօտութիւնը կատարելու համար հեղինակները խնդրած են համալսարանի 100 ուսանողէ ամբողջացնել քանի մը հարցաթերթիկ եւ երկու համակարգչային առաջադրանք, որոնցմով կը ստուգէին տագնապի, բացասական միտքերու աստիճանը եւ յաճախակիութիւնը: Հաշուի առնուած էր նաեւ քնանալու ժամը. ուսանողը բո՞ւ էր թէ՝ արտո՞յտ:

Պարզուած է, որ ուսանողները, որոնք աւելի ուշ եւ քիչ կը քնանան՝ ունին աւելի շատ կրկնուող բացասական միտքեր:

Ըստ հեղինակներուն՝ արդիւնքները ցոյց տուած են, որ ոչ լիարժէք քունը կրնայ կապուած ըլլալ բացասական մտածողութեան զարգացման հետ, եւ կրկնուող բացասական միտքերու հետ կապուած հոգեկան շեղումներով մարդիկ պէտք է փոխեն իրենց քունի ժամերը եւ փորձեն քնանալ աւելի կանուխ եւ աւելի երկար ժամանակ յատկացնեն քունին:

## ՄԻ՛ ՆԵՏԷՔ ՊԱՆԱՆԻ ԵՒ ՆԱՐԻՆՋԻ ԿԵՂԵՒԸ. ԱՆՈՆՔ ՀՐԱՇՔՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ ՁԵՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՄԱՐ

Շատ անգամ պտուղի կեղեւը աւելի օգտակար է եւ կը պարունակէ աւելի շատ սննդարար նիւթեր, քան՝ միջուկը: Այս պնդումը միանշանակ ճիշդ է պանանի եւ նարինջի համար: Այս պտուղներուն կեղեւին համար կան բազմաթիւ գործածութիւններ թէ՛ առողջական եւ թէ՛ առօրեայ իմաստով, որոնց մասին դուք, հաւանաբար, տեղեակ չէիք:

Նարինջին կեղեւը, ճիշդ այնպէս, ինչպէս խնձորի կեղեւը, շատ սննդարար է, բայց պէտք է ընտրել թունաւոր քիմիականներով չաղտոտած պտուղներ կամ, ծայրայեղ պարագային, պտուղը կէս ժամ պահել սոտայաջուրի լուծոյթի մէջ:

Համաձայն հետազօտութիւններու՝ նարինջի կեղեւը կը բարելաւէ մարսողութիւնը եւ նիւթափոխանակութիւնը: Անիկա յաջողութեամբ կը պայքարի կազերու, սրտխառնուքի, թթուայնութեան եւ փսխունքի դէմ: Կեղեւին օգտակարութիւնը կապուած է անոր մէջ եղող եթերային իւղերուն: Այս իւղերը ունին հակամանրէական եւ հակաբորբոքային յատկութիւններ, ինչպէս նաեւ կը նպաստեն լեարդի աշխատանքին: Եթերային իւղերը կ՛ազդեն նաեւ ջղային համակարգին վրայ, մասնաւորապէս իրենք զիրենք լաւապէս կը դրսեւորեն տրամադրութեան բարձրացման գործին եւ անքնութեան դէմ պայքարին մէջ:

Պանանի կեղեւը կը պարունակէ մեծ քանակութեամբ հակաօքսիտանդներ եւ կենսանիւթեր: Հետազօտութիւնները ցոյց կու տան, որ պանանի կեղեւը յաջողութեամբ կը պայքարի միջատներու խայթոցներուն դէմ. պարզապէս խայթուած մասը մաքրեցէք պանանի կեղեւով: Պանանի կեղեւը կը բուժէ մարմնին վրայ եղած վէրքերը եւ կապտուկները: Պանանի կեղեւին օգնութեամբ կրնաք սպիտակցնել ձեր ակռաները կամ դադրեցնել գլխացաւը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

## ՔՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ԴԵՂԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Քնանալու դժուարութիւն ունեցող մարդոց մօտ ընդհանրացած երեւոյթ է քնաբեր դեղահատերու օգտագործումը՝ յաճախ առանց մասնագէտ բժիշկի թելադրութեան: Այս գծով ամէնէն շատ օգտագործուած դեղերն են՝ անդիգոլինըրճիգ դեղերը, որոնք կ՛արգելափակեն ասիտալգոլինի աշխատանքը ուղեղին մէջ: Որպէս արդիւնք՝ անհատը կրնայ դիւրութեամբ քնանալ: Սակայն այս դեղը նաեւ ունի կողմնակի ազդեցութիւններ, որոնցմէ ամէնէն հաւանականներն են՝ ստամոքսի եւ աղիքներու պրկուածութիւնը, մարսողութեան դժուարութիւնը, աչքի եւ բերանի չորութիւնը:

Ամերիկացի գիտնական Շէլի Կրէյի գլխաւորութեամբ կատարուած հետազօտութիւնը ցոյց կու տայ, որ անդիգոլինըրճիգ քնաբեր դեղեր կրնան նաեւ ժխտական ազդեցութիւն ունենալ ուղեղի առողջութեան վրայ: Կրէյ իր ուսումնասիրութեան արդիւնքներուն վրայ հիմնուելով կը շեշտէ թէ մարդիկ պէտք է խուսափին դեղեր օգտագործելէ առանց բժիշկի խորհուրդներուն դիմելու:

Եօթը տարուան վրայ երկարող Կրէյի հետազօտութիւնը պարզած է, թէ՝ անդիգոլինըրճիգ քնաբեր դեղերը առնչուած են dementia-ի եւ alzheimer's-ի հետ: Որքան բարձր ըլլայ դեղաքանակը այնքան կը բարձրանայ այս անհանգստութիւններէն տառապելու հաւանականութիւնը:

Կրէյ կը նշէ թէ դեղաքանակի կողքին նաեւ մեծ դեր ունի դեղերու օգտագործման ժամանակամիջոցը: Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ՝ երեք տարիներու վրայ անդիգոլինըրճիգ դեղերու օգտագործումը կրնայ 15-էն 30 առ հարիւր համեմատութեամբ բարձրացնել dementia-ի հաւանականութիւնը: Նշենք, որ այս ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան 3,500 կամաւորներ:

## ԻՆՉՊԷ՞Ս ՔՆԱՆԱԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԵԹԷ ՔՆԱՆԱԼՈՒ ՓԱՓԱՔ ՉԿԱՅ

Կրկնութեան ձեւով յիշենք, որ գիշերային քունը անհրաժեշտ է մարդուն համար: Սակայն երբեմն այնպէս կը պատահի, որ մարդ կը պառկի, իսկ քնանալ չի կրնար ու կը սկսի ժամանակը ծախսել մէկ կողմէն միւսը դառնալով:

Այսպիսով. ինչպէս աւելի արդիւնաւէտօրէն պատրաստուիլ քնանալուն՝ նման խնդիր չունենալու համար:

- Քնանալէ առաջ պէտք չէ կլանուած հեռատեսիլ դիտել կամ գիրք կարդալ: Ասոնք կ՛աշխուժացնեն ուղեղին աշխատանքը:

Ճիշդ պիտի ըլլայ մաքուր օդին քալելը կամ հանգիստ երաժշտութիւն լսելը:

- Քնանալ ցանկալի է ամէն օր նոյն ժամուն:

- Պէտք է, ի հարկէ, հաշուի առնել մարմնի անհատական առանձնայատկութիւնները, այսուհանդերձ քնանալէն առաջ թեթեւ մարզանքը պիտի օգնէ շուտ քուն մտնելու:

- Քնանալէ առաջ պէտք չէ վերյիշել բոլոր այն տհաճ պահերը, որոնք ստիպուած էիք վերապրիլ օրուան ընթացքին:

Սենեակի օդափոխումը միայն պիտի օգնէ շուտ եւ հանգիստ քնանալուն:

- Կայ տեսակէտ, որ մտքին մէջ հաշուելը կ՛օգնէ շուտ քնանալու, սակայն իրականութեան մէջ այդպէս չէ: Հաշուելը կ՛աշխուժացնէ ուղեղը:

- Եթէ այսուհանդերձ քնանալ չէք կրնար, աւելի լաւ է դուք ձեզ զբաղցնէք որեւէ կարեւոր գործով:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 7-էն*

ւում են հալածանքների: Որոշ հալածող երկրներ, օրինակ՝ Սաուդեան Արաբիան, ԱՄՆ-ի հզօր դաշնակիցներից են:

«Սա ամենամեծ բարոյական երկընտրանքն է Ամերիկայի քրիստոնէական եկեղեցու առջեւ: Ի՞նչ պէտք է անենք որպէս քրիստոնեաներ: Յետ քաշուենք եւ հանգստանա՞նք, թէ որեւէ բան ձեռնարկենք: Հազարաւոր քրիստոնեաներ մահանում են իրենց հաւատքի համար: Ես չեմ կարող լռել»,- ասել է նա: Ցօնոյեանը կոչ է արել ԱՄՆ քրիստոնեաներին՝ ստիպելու իրենց սենատորներին եւ ներկայացուցիչներին ուշադրութիւն դարձնել հալածանքների ճակատագրին եւ փոփոխութիւններ պահանջել: «Ինչ էլ որ անելիս լինէք, խնդրում եմ, լուռ մի մնացէք,- աւելացրել է նա,- ձեր եղբայրները եւ քոյրերը ձեր կարիքն ունեն»:

## ՖՐԵԶՆՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

*Շարունակուած էջ 7-էն*

են համայնքի համար, քանի որ այն բացայայտում է նրանց համար քիչ յայտնի ֆիլմային գործերը ցեղասպանութեան վերաբերեալ:

«Որպէս հայի՝ այս տեսակի միջոցառումները յուզիչ են ինձ համար, եւ դա այն է, ինչով ես ցանկանում եմ զբաղուել: Ուսանողների համար, ընդհանուր առմամբ, դա լաւ առիթ է՝ մտովի զարգանալու, այլ մշակոյթի եւ այլ տեսանկիւնից պատմական իրադարձութեան մասին սովորելու», - ասում է Վարդանեանը:

Նա քաջալերում է ուսանողներին յաճախել դասախօսութիւններին՝ նշելով, որ դա լաւ մշակութային կրթական փորձութիւն է, յատկապէս այն պատճառով, որ մօտենում է Ցեղասպանութեան 100-ամեակը:

«Մասնակիցների քանակը ֆանտաստիկ էր: Լաւ կը լինի տեսնել նաեւ աւելի շատ ուսանողներ, որոնց ճանաչում ենք, ուսանողներ, որոնք հետաքրքրւում են ֆիլմով: Ես կարծում եմ, որ նրանք կարող են շատ բան ստանալ սրանից: Անհրաժեշտ չէ հետաքրքրուել Հայոց ցեղասպանութեան խնդրով: Սա աւելի շատ նրա մասին է, թէ ինչպէս ենք մենք տեսնում եւ մեկնաբանում ֆիլմը, այլ ոչ թէ ցեղասպանութեան պատմութիւնը»,- ասել է Դուզջեանը:

# ԳԱԼԻՊՈԼԻԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*ձեռնամուխ եղան նեղուցի պաշտպանութեան ամրացման աննախադէպ ծաւալի աշխատանքների:*

### Ռազմական գործողութիւնների սկիզբը

*Ընդառաջելով 1915 թ. Յունուարի 2-ին ռուսական հրամանատարութեան՝ Թուրքերի ուշադրութիւնը Կովկասեան ճակատում շեղելու խնդրանքին, Քիտչեներն ու Չերչիլը որոշեցին ճեղքել Դարդանելն ու հասնել Կ. Պոլիս:*

*Գործողութիւնն սկսուեց Փետրուարի 19-ին: 1914 թ. անգլիական «Indefatigable» եւ «Indomitable» գծանաւերը ֆրանսական «Suffren» եւ «Verite» զրահակիրների հետ միասին ռմբակոծեցին նեղուցի ափերը եւ հեռացան: Թուրքերն անհանգստացան եւ աւելի ուժեղացրին ափերի պաշտպանութիւնը: Չնայած դաշնակիցների 7 հածանաւերի ափամերձ տարածքների ամբողջօրեայ գնդակոծմանը, թուրքական ամրութիւններին շօշափելի վնասներ պատճառել չյաջողուեց: Գործողութիւնը վերսկսուեց միայն Փետրուարի 25-ին, երբ դաշնակիցներին յաջողուեց շարքից հանել թուրքական ափամերձ պաշտպանական շատ ամրութիւններ: Տեւական գնդակոծութիւնից յետոյ դաշնակիցները ձեռնամուխ եղան նեղուցի ականազերծմանը: Սակայն թուրքական կողմը սկսեց ինտենսիւ գնդակոծել նրանց, ինչի արդիւնքում դաշնակիցներն ստիպուած նահանջեցին:*

*Մի քանի անյաջող փորձերից յետոյ՝ Մարտի 18-ին նախատեսուեց գլխաւոր յարձակումը Դարդանելի վրայ: Կարդենին փոխարինեց մէկ այլ բրիտանական ծովակալ՝ Դէ Ռոբէկը: Դաշնակիցները համալրում ստացան եւ մարտի նետեցին բոլոր նաւերն ու ունեցած երեք դիւիզիաները: Սակայն թուրքերը նոյնպէս համալրեցին ուժերը նեղուցի տարածքում: Մարտի 18-ի առաւօտեան ժամը 10:30-ին դաշնակիցների նաւերը մտան նեղուց: Նախօրեակին նրանք իրականացրել էին ականազերծման աշխատանքներ եւ վստահ էին, որ անվտանգ կ՛անցնեն, սակայն տեղի ունեցաւ անսպասելին: Խնդիրն այն էր, որ թուրքերը կանխատեսելով յարձակումը՝ գիշերը դաշնակիցների քթի տակ գաղտնի տեղադրել էին 26 ականներ, որոնք էլ վճռորոշ նշանակութիւն ունեցան ճակատամարտի ելքի վրայ:*

*Նեղուց մուտք գործելով դաշնակիցները կրակ բացեցին, սակայն թուրքերը չպատասխանեցին: Սպասելով, որ բոլոր նաւերը մտնեն նեղուց, նրանք հուժկու գնդակոծեցին նաւախումբը, որը յայտնուել էր երկկողմանի ինտենսիւ կրակի դաշտում եւ տարածքի փոքր լինելու պատճառով խուսանաւելու մեծ հնարաւորութիւններ չունէր: Ծանր հրետակոծութեան արդիւնքում վնասուեց «Սիւֆֆրեն» գծանաւը, ականների վրայ պայթեցին «Մաժեստիկ», «Գոլուա» եւ «Բուվէ» նաւերը: Ծանր վնասուեց «Ագամեմնոնը», իսկ «Իրրեզիսթեյբլ» եւ «Օշըն» նաւերը, երբ փորձեցին շրջուել եւ դուրս գալ մարտից, պայթեցին ականներից եւ խորտակուեցին: Ժամը 18-ին Դէ Ռոբէկը հրամայեց դադարեցնել գործողութիւնը, որի ընթացքում դաշնակիցներին ոչ միայն չյաջողուեց կատարել առաջադրանքը, այլեւ զգալի կորուստներ կրեցին (նրանք կորցրեցին ուժերի մէկ երրորդը): Չնայած Դարդանելի գրաւումը չյաջողուեց, սակայն դաշնակիցները չդադարեցրին յարձակումները: Միաժամանակ յարձակման նոր պլան մշակուեց: Համաձայն որի հրամանատարութիւնը որոշեց այս անգամ Գալիպոլի թերակղզում դեսանտ իջեցնել, որպէսզի ցամաքային ուժերը գրաւէին թուրքական ափամերձ պաշտպանական կառոյցները եւ ապահովէին նաւերի ազատ մուտքը Կ. Պոլիս: Այդ նպատակով որոշուեց ընդգրկել անգլիական, աւստրալիական, նորզելանդական, սենեգալեան, հնդկական եւ ֆրանսական դեսանտային զօրաջոկատներին՝ ընդամէնը 81 հազար մարդ եւ 178 հրանօթ: Օսմանօգերմանական ուժերի հրամանատարներ Օտտո Լիման ֆոն Սանդերսը եւ Էսատ փաշան հասկանալով դաշնակիցների այդ մտադրութիւնը եւ ցանկանալով դիմագրաւել այդ ձեռնարկին, ձեւաւորեցին հինգերորդ բանակը եւ ուժեղացրին նեղուցի պաշտպանութիւնը: 1915 թ. Ապրիլի 25-ին դաշնակիցներն սկսեցին դեսանտային ափհանումը Գալիպոլի: Ափ դուրս եկած անգլիական ուժերը կէսօրին ենթարկուեցին թուրքական հուժկու յարձակման: Ապրիլի 26-ին անգլիական ուժերը նահանջեցին եւ բարձրացան նաւերը: Սակայն 29-րդ դիւիզիայի մարտիկները կարողացան արագ խրամատաւորուել եւ դիմակայել օսմանեան ուժերի յարձակումներին: Փոփոխակի յաջողութիւններով ընթացող մարտը աւարտուեց նրանով, որ անգլիացիները կարողացան ամրանալ ցամաքում, սակայն աւելին անել այլեւս նրանց կամ «չյաջողուեց» կամ չցանկացան:*

*Անզակի՝ Աւստրալիական եւ նորզելանդական ջոկատները նոյնպէս կարողացան նպաստաւոր դիրքեր գրաւել ցամաքում: Չնայած Էսադ փաշայի հրամանատարութեամբ գործող 19-րդ դիւիզիան անցաւ յարձակման եւ մեծ ջանքեր գործադրեց, սակայն դաշնակիցներին յաջողուեց ամրանալ ցամաքում: Ասիական ափում Կուկ-կալէի շրջանում ափ դուրս եկան ֆրանսացիները, որոնց ակտիւօրէն օգնում էին ռուսական ուժերը «Ասկոլդ» հածանաւի ակտիւ օժանդակութեամբ: Վերջիններիս նպատակը թուրքական ուժերի ուշադրութեան շեղումն էր Գալիպոլիի ափհանման գործողութիւնից: Ֆրանսացիներին յաջողուեց երկու գիւղ գրաւել, սակայն աւելի առաջ շարժուել հնարաւոր չեղաւ: Ուշադրութիւն շեղելու յանձնարարութիւնը կատարուած էր եւ ֆրանսացիները ետ քաշուեցին:*

*Առաջին օրուայ դեսանտային ափհանման ընթացքում երկուստեք մեծ կորուստներ ունեցան: Դաշնակիցները կորցրեցին 18 հազար մարդ, սակայն դեսանտայիններին դէպի ծովն ետ մղելու համար թուրքերի ուժերն անբաւարար էին: Դաշնակիցների շարքերում հերոսաբար մարտնչում էին նաեւ յոյների եւ հրեաների կամաւորական ջոկատները: Ափհանումից յետոյ որոշուեց շարժուել դէպի Գալիպոլիի խորքը: Խոշոր ճակատամարտ տեղի ունեցաւ յատկապէս Կրիտի գիւղի շրջակայքում:*

*Մայիսից Օգոստոս դաշնակիցները փորձեցին ընդլայնել գրաւած տարածքները եւ կրկին արիւնահեղ մարտեր ընթացան Կրիտի գիւղի համար, սակայն այն գրաւել չյաջողուեց: Ակնյայտ էր դարձել, որ Դարդանելի օպերացիան չի յաջողուել, ուստի 1915 թ. Դեկտեմբերին որոշուեց Գալիպոլիից դեսանտային ուժերը էուակուացնել: Իրականում մեծ ցանկութեան դէպքում դաշնակիցները կարող էին յաջողութեամբ աւարտել օպերացիան, սակայն դիւանագիտական որոգայթների լաբիրինթոսը խանգարեց, խճճեց եւ պատնէշեց յաղթանակին: Իսկ թուրք-գերմանական ղեկավարութիւնը մեծ շուքով տօնեց յաղթանակը Բեռլինում եւ Կ. Պոլսում: Ծովային նախարար Չերչիլը որպէս այդ գործողութեան նախաձեռնող հրաժարական տուեց:*

***

*Արդէն նշեցինք, որ Էրդողանի կողմից ՀՀ նախագահին Դարդանելի կամ որ նոյնն է՝ Գալիպոլիի ճակատամարտի 100-ամեակին նուիրուած տօնակատարութեանը հրաւիրելու առիթով տպագիր եւ յատկապէս էլեկտրոնային մամուլը ողողուեց տարաբնոյթ հրապարակումներով: Կարելի է ենթադրել, որ դեռ շատ աւելի գրուելու է յատկապէս մինչեւ Ապրիլի 24-ը: Ցայսօր դրանց մէջ շահեկանօրէն տարբերւում է մերօրեայ ակտիւ եւ վերլուծական բնոյթի մեծաքանակ ելոյթներով հանրութեանը յայտնի հայրենաբնակ մտաւորական պրոֆեսոր Լեւոն Շիրինեանի հեղինակած պարզաբանումներն այդ ճակատամարտի եւ նրա ունեցած նշանակութեան մասին: Դրանք նա կատարել է Վեհիբ փաշայի խոստովանութիւն-մենախօսութեան հիման վրայ, որոնք շարադրուած են ՀՅԴ յայտնի գործիչ Ռուբէնի «Որպէս վաւերագրի իր տեսակի մէջ եզակի մի օրինակ, շատ աւելի հաւաստի, քան ստուարածաւալ որեւէ հետազօտութիւն»[4] վաւերագիր-յուշագրութեան մէջ: Առաջին աշխարհամարտի թուրք ռազմաքաղաքական գործիչ Վեհիբ փաշայի յուշերի ու գնահատականների հենքի վրայ խորագիտակ հետազօտողը ցոյց է տալիս, որ թէ՛ հակամարտող, թէ՛ դաշնակից ուժերի միջեւ մշտապէս գործել է հաւասարակշռութեան պահպանման մշտնջենական ձգտումը՝ կողմերից մէկին բերելով մահ, միւսին պարգեւելով թէկուզեւ ժամանակաւոր երջանկութիւն:*

*Ռուբէնի յիշեալ երկում Դարդանելի ճակատամարտում թուրքերի յաղթանակի պատճառների մասին Վեհիբ փաշան ասում է, որ առասպել են թուրքերի թուական, զէնքի առաւելութեան ու լաւ պատրաստուածութեան մասին խօսակցութիւնները: Դաշնակիցներն աւելի ուժեղ էին, մարտունակ եւ նորագոյն տեխնիկայով էին զինուած: Իսկ «Եթէ ճիշտը իմացուի, բոլորն ալ դաւաճան ըսելով պիտի կախեն մեզ: Տարտանելի կռիւներուն մէջ խելքը, հերոսութիւնը, քաջութիւնը որո՞ւն կողմն էր: Եթէ քեզի ըսեմ, որ Դարդանելի մէջ մեր կողմը ոչ խելքի, ոչ հերոսութեան եւ ոչ ալ քաջութեան անհրաժեշտութիւնը կար, պիտի չհաւատաս: Այդ բոլորը անհրաժեշտ էին, սակայն մեր հակառակորդ կողմին. անոնք ալ այդ չունէին»: Դաշնակիցները հարազատ զօրքի գիտակցական ոճրագործները եղան,-պարզաբանում է Վեհիբ փաշան եւ շարունակում,- Դարդանելը պաշտպանելու համար մենք հեռարձակ թնդանօթներ չունէինք: Հակառակորդը հեռուից կարող էր մեզ լռեցնել եւ մտնել նեղուցները, սակայն «Պատահեցաւ մեզի համար անսպասելին: Յաջողութեան մէջ անոնք թողին եւ իրենց զրահանաւերով հեռացան նեղուցներէն: Գիտե՞ս ինչու: Ֆրանսական ղեկավարութիւնը իբրեւ աւելի սնափառ, առաջինը կ՛ուզէր լինել Դարդանելին տիրողը եւ Պոլիս մտնողը, իսկ անգլիական ղեկավարութիւնը ատոր կը վերաբերէր յետին հաշիւներով: Երբ ֆրանսական քանի մը զրահանաւեր վնասուեցան եւ անյոյս դարձան,- այդքան վնաս անխուսափելի էր,- անգլիացիք իսկոյն եզրակացութիւն հանեցին, թէ անհնար է նաւատորմիղով տիրապետել Դարդանելին, թէպէտ ան արդէն տիրապետուած կրնար լինել փոքրիկ ճիգով մը: Անգլիացիք չուզեցին զրահանաւերով մտնել Դարդանել եւ Պոլիս: Անոնց հաշիւն էր, թէ որո՞ւ համար տիրենք Դարդանելին, քանի որ Պոլիսը եւ Նեղուցները խոստացուած են Ռուսիոյ: Որով իրենց զոհաբերութիւնը պիտի ծառայէր Ռուսիոյ տիրապետութեան»: Իրենց հերթին գերմանացիները յոյս ունէին անգլիացիների մուտքով Կ. Պոլիս «ճեղք մը բանալ ռուսերու եւ անգլիացիներու միջեւ»: Այս ամէնից տարածուեց այն սուտ առասպելն ու թիւր կարծիքը, թէ Դարդանել ուժով մտնելն անհնարին է: «Իսկ ցամաքով Դարդանելին տիրելու ճանապարհը Կելիպոլիի թերակղզին չէր,- շարունակում է իրաւացիօրէն պարզաբանել Վեհիբը, այլ՝ այդ թերակղզիի գլուխը եթէ լրջօրէն ցանկային Դարդանելին տիրել, փոխանակ իւրաքանչիւր օր զոհաբերելու 20-30 հազար մարդ Կելիպոլիի թերակղզիին մէջ, այդ զօրքերը կը յատկացնէին Սերոսի ծոցէն զարնելու թերակղզիի վիզին եւ գագաթին»: Պարզ էր, որ «Անգլիացիներու բուն նպատակը Նեղուցները տիրապետելը չէր, այլ նեղուցներու մէջ մեզ զբաղեցնելը եւ մեզ մաշեցնելը»-իր խօսքն աւարտում է Վեհիբը:*

***

*Ամփոփելով նշենք, որ Դարդանել-Չանաքքալէի կամ որ նոյնն է՝ Գալիպոլիի ճակատամարտին, որին ընդհանուր հաշուով մասնակցել են Մեծ Բրիտանիայի կողմից 490 հազար, Ֆրանսայի՝ 120 հազար, Թուրքիայի՝ 320 հազար մարդ, նպատակը՝ Դարդանելով մտնել եւ Ստամբուլը գրաւելն էր եւ դաշնակից Ռուսաստանին օգնելը, իսկ յաղթանակի դէպքում՝ իրար մէջ բաժանել Օսմանեան կայսրութիւնը: Դաշնակիցները չյաղթեցին, իսկ Անտանտի պարտութիւնը նշանակում էր Անգլիայի եւ Ֆրանսայի թուլացում եւ ԱՄՆ-ի, որն այդ պահից միացաւ պատերազմին, ու Ռուսաստանի (ապագայ ԽՍՀՄ-ի) հզօրացում միջազգային արենայում: Այն ամենավերջին ճակատամարտն էր, որտեղ Օսմանեան խալիֆայութիւնը «յաղթանակ» տարաւ, որի հենքի վրայ փաստօրէն շարունակուեց Թուրքիայի նոր հանրապետութեան ձեւաւորման յաղթարշաւը:*

*Նկատենք, որ նախկինում, ինչպէս իրաւացիօրէն նշում են թուրք պատմաբան Ռամազան Գիոզենն ու միւսները, շուրջ մէկ տարի տեւած (1915 թ. Յունուարից մինչեւ 1916 թ. Փետրուար) ծովային եւ ցամաքային այդ հակամարտութեան ընթացքում, որ աւելի շատ ուժի ցուցադրման դրսեւորում էր, մասնակցեցին մեծ թուով նաւեր եւ շուրջ 1 մլն մարդ: Գալիպոլի-Դարդանելի ճակատամարտին, որը Թուրքիայում ամէն տարի Մարտի*

*Շար.ը էջ 19*

## Քոչարեանը կրկին դուրս չեկաւ

Շարունակուած էջ 2-էն

ներհամակարգային իրավիճակի եւս մի հետաքրքիր շերտ: Քոչարեանը փաստացի անվտանգութեան երաշխիք է ակնկալում Ծառուկեանի համար՝ ակնարկելով, որ այդ դէպքում Ծառուկեանը կը մնայ «բանաւոր մենամարտի» շրջանակում:

Երկրորդ Նախագահն էլ Սերժ Սարգսեանի քայլից յետոյ յայտնուել է բարդ վիճակում: Մի կողմից նա չի կարող դուրս գալ Ծառուկեանի թիկունքից եւ անձամբ ներգրաւուել աշխոյժ քաղաքական գործընթացի մէջ, միւս կողմից նա պատասխանատուութիւն է կրում Ծառուկեանի ճակատագրի համար, որը Սերժ Սարգսեանի ձեռքում է:

Ակնյայտ է, որ Սերժ Սարգսեանի քայլն անակնկալի է բերել Ռոբերտ Քոչարեանին ու ԲՀԿ-ին: Բլեֆի տարբերակը չի բացառում որեւէ դէպքում՝ թէ արտահերթ ընտրութիւնների, թէ Ծառուկեանի հետապնդման, թէեւ Սերժ Սարգսեանը մի քանի քայլ արդէն արել է: Բայց եթէ ենթադրենք, որ բլեֆի հաւանականութիւնը երկուստեք հաւասարազօր է, ապա չբլեֆի կամ ոչ բլեֆի դէպքում Սերժ Սարգսեանի ձեռքում է իշխանութիւնը վարչահրամայական, ուժային մեքենայով, եւ նրա գործողութիւնների օպերատիւութիւնը անկասկած շատ աւելի բարձր է:

Այդ իրավիճակում «բանաւոր մենամարտը» գոնէ այս փուլի համար նուազագոյն կորստով նահանջի տարբերակն է ոչ իշխանական բեւեռի համար: Փետրուարի 5-ի Գագիկ Ծառուկեանի ելոյթը վկայում էր, որ ոչ իշխանական բեւեռը պատրաստուել է երկար խաղի, իսկ Սերժ Սարգսեանը Փետրուարի 12-ին առաջարկեց «բլից»:

Ոչ իշխանական բեւեռից արձագանքները, թէ Ծառուկեանի ելոյթի, թէ եռեակի հանդիպումների, թէ Ռոբերտ Քոչարեանի արձագանքի տեսքով յուշում են, որ չնայեած Նախագահի արտահերթ ընտրութեան վերաբերեալ պահանջի բարձրաձայնմանը, այդուհանդերձ առաւել կոնկրետ խնդիրը դիտւում է խաղը վերստին հանդարտ, երկարատեւ ընթացքի վերադարձնելն ու այդ հեռանկարում Սերժ Սարգսեանի ստացած դիրքային կտրուկ առաւելութիւնը չէզոքացնելու փորձը:

«ԼՐԱԳԻՐ»

## ԳԱԼԻՊՈԼԻԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 18-էն

18-ին էր նշւում որպէս պետական տօն, զոհ գնացին Բրիտանական կայսրութիւնից սպանուած, վիրաւոր եւ անհետ կորած 120 հազար, Ֆրանսայից՝ 27 հազար, իսկ Օսմանեան կողմից՝ 186 հազար մարդ:

Մասնագէտների գնահատմամբ ակնյայտ է, որ թուրքական կողմը 2015 թ. Ապրիլի 24-ին այն տօնելը պատմականօրէն ոչնչով պատճառաբանուած չէ: Բոլորի համար էլ յստակ է, որ Թուրքիան Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած միջոցառումների ձախողմանն ուղղուած հերթական քայլն է ձեռնարկել, որ խեղդի Օսմանեան կայսրութեան հայերի նկատմամբ իր իսկ իրագործած զանգուածային սպանութիւնների, 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան յիշողութիւնը: Դա թուրքերի հերթական կեղծիքն է, հայկական հոլոքոստը թաքցնելու ամօթալի փորձ, պատմականութեան տրամաբանութեան խեղաթիւրում, որի նպատակն է համաշխարհային հասարակութեան ուշադրութիւնը Հայոց եղեռնի 100-ամեայ տարելիցից շեղելու, եւ անյոյս ջղաձգումով հատուցման ժամը երկարաձգելու համար:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Հայկուհի Վահագն իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, հեռաձայնով եւ գրութեամբ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին իրենց եղբօր Յակոբ Փաթափութեանի մահուան տխուր առիթով: Մասնաւոր շնորհակալութիւն «Մասիս» շաբաթաթերթին եւ «Նոր Սերունդ Մշակութային Միութեան» իրենց վշտակցութեան համար:

Այս առիթով կը նուիրեն $100 տոլար «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:


## ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ԿԸ ՀՐԱՒԻՐԷ ՁԵԶ

## «Champagne Brunch Buffet»-Ի

ԲԱԶՄԱՏԵՍԱԿ ՆԱԽԱՃԱՇԻ ՅԱՆԿՈՎ

Տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 1-ի առաւօտեան ժամը 10-ին, Հ.Մ.Մ-Ի «Կարօ Սօղանալեան» սրահի մէջ
1060 N.Allen Ave. Pasadena

Հասոյթը պիտի յատկացուի Հալէպի Կիլիկեան վարժարանի գոյատեւման

Ձեր տեղերը ապահովելու համար զանգել սոյն թիւերուն՝
818-468-3648 818-406-7130 626-797-8465


## Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ

Շարունակուած էջ 13-էն

այդքան վարպետօրէն օգտագործում են, նշւում է, որ Սիրիան պէտք է ենթարկուի այն նոր կարգ ու կանոնին, որը համապատասխանելու է Միջին Արեւելքում ամերիկեան պատկերացումներին: Ես տեղեկացել էի, որ Նոր Կարոլինայում կեղծիքներ յօրինող նման մի կենտրոն կայ եւ դա ամենեւին էլ չի բացառում, որ մեծ Բրիտանիայում եւ Իսրայէլում էլ նման կենտրոններ չլինեն:

Ցամենայնդէպս, դեռ նախքան Դերայում եւ Հոմսում տեղական ցոյցեր սկսուէին, առանց այլեւայլի պահանջ էր դրւում, որ պէտք է Դամասկոսում իշխանութիւնը ոչնչացուի:

2013 թուականին «Ազատ Սիրիայի Բանակի» Սուլիման կեղծանունով մի սպայ, ում ես այցելել էի, իր ժամանակաւոր հրամանատարական տնակում, ինձ հետեւեալը խոստովանեց.

«Դերայում ցոյցերը ինքնաբերաբար չեն սկսուել: Նա ինքը դրանից մի տարի առաջ հանդիպում է ունեցել յորդանանեան եւ ամերիկեան ծպտուած լրտեսների հետ: Նրանք իրեն վստահեցնելով, որ նա ֆինանսապէս ապահովուած կը լինի, ցանկանում էին իրեն քաջալերել, միանալ «Ազատ Սիրիական Բանակի» յեղաշրջման ծրագրերին: Այդ բանակին անհրաժեշտ կառուցուածքը տրամադրուելու եւ զինումը կատարուելու էր Յորդանանի հողի վրայ: Դրանից յետոյ, շնորհիւ Սաուդեան Արաբիայի, ինչպէս նաեւ Քաթարի էմիրաթի լայն ֆինանսաւորման, բայց եւ CIA-ի անմիջական ղեկավարութեան ներքոյ, իրականացուել է խռովարարների բանակի կազմումը եւ զինաւորումը՝ ամենաժամանակակից պատերազմական զէնքերով: Անկասկած որ հենց այդ ժամանակ էլ միջազգային դաւադրութիւն է կազմակերպուել՝ Դամասկոսում Պաաս կուսակցութեան իշխանութեան դէմ»:

Ուաշինկտոնում, Րիադում, Դոհայում, ինչպէս նաեւ Երուսաղէմում վստահ էին, որ Սիրիայում, արեւմուտքի կողմից օգնութիւն ստացող ընդդիմադիրների բանակի երեւան գալը, յուսալքուած զանգուածների մօտ, համաժողովրդական անդիմադրելի մի շարժում կ՚առաջացնէր, որի պատճառով Ասատի եւ Ալաւիթների կլանը կարճ ժամանակամիջոցում վերացուելու էր: Ահա անգամ եւս, ինչպէս ժամանակին՝ Իրաքում, Լիբիայում, Եգիպտոսում, հաւանաբար նաեւ վաղը Իրանում, արեւմուտքի լրտեսական ծառայութիւնները, իրենց ցանկալի պատկերացումների, ինչպէս նաեւ ուտոպիական եւ սխալ ծրագրերի զոհը դարձան:

Դերաի անկումից յետոյ, Հոմս քաղաքը առնուեց աքցանի մէջ, այստեղ Սաուդեան Արաբիայի կողմից ռազմամթերքի տրամադրումը բոլոր տեղերից աւելի ինտենսիւ էր, որի պատճառով պետական բանակը ծանր կացութեան մէջ ընկաւ: Հոմսում պարզուեց նաեւ, որ քարիւղի միապետին բոլորովին էլ չէր հետաքրքրում, աշխարհիկ եւ արեւմուտքի ապրելակերպին ձգտող «Ազատ Սիրիական Բանակ»ին զինամթերք մատակարարել: Սաուդեան Արաբիայի Վահաբիթների իսկական դաշնակիցները այն նոյն ծայրայեղ՝ «Աստծոյ Մարտիկներն» էին, որոնք իրենց ջիհադիստներ են անուանում:

Իսլամ ծայրայեղականները իսկական յաջողութեան հասան Թուրքիա-Սիրիա ամբողջ հազար քիլոմեթր սահմանագծի երկայնքով, որը Էրդողանի կառավարութեան կողմից բացուել էր, եւ ոտնահարելով միջազգային տարրական համաձայնագրերը, օգտագործւում էր որպէս միջանցք՝ Սաուդեան Արաբիայից եւ Քաթարից ստացուող ռազմամթերքը Սիրիա տեղափոխելու համար: Թուրքիայի սահմանի բացումը պատճառ դարձաւ, որ ամբողջ իսլամական աշխարհից ջիհադիստները մասսայաբար դէպի հիւսիսային Սիրիա, մասնաւորապէս Համաթի տարածքով, դէպի Ումա ներխուժէին, այնպէս որ Դամասկոսի իշխանութիւնը կորցրեց Հալէպի շրջակայքի մի քանի բնակավայրեր: Ցետագայում առեւտրի հիւսիսային այդ մայրաքաղաքը բաժանուեց երկու մասի: Հակառակորդները քաղաքի աւերակներում անյուսալի տնային պատերազմ էին մղում:

Դիպուկահարները դարան մտած մայրուղիների երկու կողմերի շէնքերում, սպասում են իրենց զոհերին, որոնք շատ յաճախ խաղաղ բնակիչներ են լինում:

«Վերջերս,-շարունակում է սպան, յաճախակի են դառնում բախումները ԱՄՆ-ի կողմից հովանաւորուող «Սիրիայի Ազատ Բանակ»ի եւ մեծ արագութեամբ հզօրացող, ծայրայեղ իսլամիստների՝ կանաչ լեգիոնների միջեւ, որոնք «սրբազան պատերազմի» են արշաւել: Նրանց նպատակն է, Սիրիայում ալաւիթներին՝ «Աստծոյ թշնամիներին», ոչնչացնել, քրիստոնեաներին երկրից վտարել եւ Դամասկոսում նոր խալիֆաթ հիմնել, որի կրօնական խստութիւնը, անցնելու է թալիբանների կողմից գործադրած բռնութեան մեթոտներից»:

Ջիհադիստների շարքերը լրացնում են շատ յաճախ մահուան պատրաստ վետերաններ, որոնք մեծ մասսամբ այստեղ են եկել Իրաքից, Աֆղանստանից, Լիբիայից, նոյնիսկ Կովկասից եւ քաղաքացիական պատերազմի մեծ փորձ ունեն:

Այս սարսափելի ռազմիկներին միշտ էլ յաջողւում է, «Սիրիայի Ազատ Բանակ»ի համար նախատեսուած CIA-ի կողմից ռազմամթերքների առաքումը բռնագրաւել, որը չափաւոր ուժերին պէտք է հնարաւորութիւն տար, շարունակել դիմադրութիւնը կեդրոնական իշխանութեան դէմ:

Արեւմուտքի կողմից Սիրիայի տարածքում գործադրուած իշխանափոխութեան ստրադեգիայի լրիւ ձախողումը բացայայտուեց այն ժամանակ, երբ այս երկու ջիհադիստները՝ «Ջիհադ Էլ Նուսրա» եւ «Ահրար Էլ-Շամ» կազմակերպութիւնները միացան, որպէսզի իսլամական Աստծոյ պետութիւն ստեղծեն:

«Դուք երեւի կը զարմանաք, որ ես այսպէս բացայայտ եմ խօսում, մեր ներկայ, անյոյս կացութեան շուրջ, - աւելացնում է Սուլիմանը, բայց այսօր մենք գիտենք, որ մենք, մի՝ «մեծ խաղում», միայն շախմատի տախտակի խաղաքարերն ենք»:

Իշխանափոխութիւնը Դամասկոսում (փոխարէնը՝ Սուննիների իշխանութիւն հիմնումը), կամ Սիրիայի բաժանումը, ԱՄՆ-ին, Իսրայէլին եւ Սաուդեան Արաբիային կարեւոր է, որպէսզի Շիա իսլամի ազդեցութիւնը, որը շնորհիւ՝ Լիբանանում հիզպոլահների ներկայութեան, մինչեւ Միջերկրական ծով է հասնում, նուազեցնել եւ Իրանի մոլլաներին, իրենց սահմանները ցոյց տալ...:

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

*Շարունակուած էջ 8-էն*

րի լուծում:

Դոկտոր Նորբերտ Լամմերտը Թեմի առաջնորդից հետաքրքրուեց Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի շրջանակներում, Վրաստանի տարածքում հայկական եւ իսլամական համայնքների փոխյարաբերութիւնների եւ հայերի ու թուրքերի փոխյարաբերութիւնների մասին: Բունդեստագի նախագահը նշեց, որ ողջ Եւրոպան տեղեակ է 100 տարի առաջ հայերի նկատմամբ տեղի ունեցած ցեղասպանութեան մասին, յաւելելով, որ հայկական տարբեր համայնքներում տարբեր միջոցառումներով յիշատակելու են այդ ողբերգական կորստի զոհերին եւ Եւրոպայում ուշիուշով հետեւում են հայ-թուրքական փոխյարաբերութիւններին:

Բարձրաստիճան հիւրերին հետաքրքրում էր նաեւ այն, թէ Վրաստանի հայ համայնքի որքան մասն է կազմում ցեղասպանութիւնից մազապուրծ փրկուած եւ Վրաստան գաղթած հայութեան թիւը:

Սրբազանն իր երախտագիտութիւնը յայտնեց դոկտոր Նորբերտ Լամմերտին հայ ժողովրդի մեծ վշտի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրութեան համար եւ ներկայացրեց, որ հակառակ պատմական իրադարձութիւններին, Վրաստանում հայ համայնքը հաշտ ապրում է իսլամական համայնքի հետ, չմոռանալով, անշուշտ, պատմութեան արդարութեան յիշողութիւնն ու պահանջատիրութիւնը:Սրբազանը նշեց, որ վրացահայ համայնքի գրեթէ մէկ երրորդը հանդիսանում են ցեղասպանութեան զոհերի ժառանգներ եւ վրացահայութիւնը Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի շրջանակներում կազմակերպում է տարբեր միջոցառումներ եւ աշխարհասփիւռ հայութեան հետ իր ձայնն է բարձրացնում արդարութեան համար:

Թեմի առաջնորդը նաեւ իր գոհունակութիւնը յայտնեց վրացական իշխանութիւններին եւ կրօնական բոլոր համայնքների ներկայացուցիչներին, ովքեր մշտապէս կիսում են վրացահայութեան վիշտը եւ կանգնում են հայ համայնքի կողքին:

Հանդիպմանը քննարկուեց նաեւ համայնքների միջեւ խաղաղ ամուսնութիւնների եւ բազմամշակութային փոխհամագործակցութեան վիճակագրութիւնը Վրաստանում:

Վրաստանում Գերմանիայի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Օրթվին Հենիգը իր շնորհակալութիւնը յայտնեց հիւրերին հանդիպմանը մասնակցութեան եւ ջերմ գրոյցի համար:

## «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏ»

*Շարունակուած էջ 8-էն*

«2015 թ-ի Յունուարից սկսած «Խաղաղութեան արուեստ» կազմակերպութիւնը բարձրացրել է տաս վահանակներ ամերիկեան երեք նահանգներում՝ Շիքագօ՝ Իլինոյսում (Chicago IL), Սիեթլ՝ Ուաշինկթոնում (Seattle WA), Փիբոդի, Շարոն եւ Ֆոքսբորօ՝ Մասաչուսեթսում (Peabody, Sharon and Foxboro MA) եւ շարունակելու է Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած էլեկտրոնային վահանակների քարոզարշաւը Միացեալ Նահանգ-ներում 2015 թ-ի ընթացքում»,- ասել է «Խաղաղութեան արուեստ» կազմակերպութեան հիմնադիր նախագահ Դանիէլ Վարուժան Հեճինեանը:

Յունուար ամսին տեղադրուած էլեկտրոնային վահանակներից առաջինը կոչ էր անում.

«Դատապարտէ՛ք անցեալը, որպէսզի չդառնաք յաջորդ զոհը: Յիշէ՛ք 1915 թ-ի Հայոց ցեղասպանութիւնը»:

Յաջորդ էլեկտրոնային վահանակի գրութիւնը նուիրուած էր 1915-2015 թթ-ի ժամանակաշրջանում տեղի ունեցած բոլոր ցեղասպանութիւնների զոհերի յիշատակին:

1996 թ-ից սկսած՝ վերջին տասնինը տարիների ընթացքում, Դանիէլ Վարուժան Հեճինեանը Մասաչուսեթս նահանգում տեղադրում է մեծածաւալ գովազդային վահանակներ, որոնք ահազանգում են մարդկութեանը սպառնացող վտանգի մասին, յորդորում դատապարտել դարի ոճիրը, չլինել ցեղասպանութեան յաջորդ զոհը, վերջ դնել ցեղասպանութիւններին մէկ անգամ, ընդմիշտ եւ բոլորի համար: Լրացուցիչ տեղեկութիւնների համար այցելել. www.PeaceofArt.org:

Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակ

ԱՊՐԻԼ 24, 10

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱՒ

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴԷՊԻ ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Հարիւրամեակի Ձեռնարկներ

Ապրիլ 14
Էքումենիք Արարողութիւն
Cathedral of Our Lady of the Angels
Los Angeles, CA

Ապրիլ 23
Հանդիսաւոր Սուրբ Պատարագ
Սուրբ Ղեւոնդեանց Մայր Տաճար
Burbank, CA

Ապրիլ 24
Արդարութեան Քայլարշաւ
Փոքրիկ Հայաստանէն դէպի Թրքական Հիւպատոսարան

Ապրիլ 25
Հակում
Մոնթէպէլլոյի Ցեղասպանութեան Յուշարձան
Bicknell Park, Montebello, CA

Ապրիլ 26
Յուշ Երեկոյ
Կազմակերպութեամբ Կլենտէյլի Քաղաքապետութեան
Alex Theatre, Glendale, CA

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք՝ www.march4justice.org

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE.
PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝
(626) 398-0506